

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱԶԳԱՅԻՆ
ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ
(հատվածներ)

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 8

Վրաստանի պետական լեզուն վրացերենն է, իսկ Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունում՝ նաև աբխազերենը:

Հոդված 14

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար են օրենքի առջեւ, անկախ ռասայից, մաշկի գույնից, լեզվից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային, էթնիկական կամ սոցիալական պատկանելությունից, ծագումից, գույքային վիճակից, ծնունդից, բնակության վայրից:

Հոդված 26

1. Յուրաքանչյուր ոք ունի միավորումներ այդ թվում, արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամակցելու իրավունք:

2. Վրաստանի քաղաքացիներն իրավունք ունեն օրգանական օրենքների համապատասխան ստեղծելու քաղաքական կուսակցություններ կամ այլ միավորումներ և մասնակցելու դրանց գործունեությանը:

Հոդված 38

1. Վրաստանի քաղաքացիները իրավահավասար են սոցիալական, տնտեսական, մշակութային եւ քաղաքական կյանքում՝ անկախ նրանց ազգային, էթնիկական, կրոնական կամ լեզվական պատկանելությունից: Նրանք իրավունք ունեն ազատորեն՝ առանց որեւէ խտրականության, և միջամտության, զարգացնել իրենց մշակույթը, օգտվել հայրենի լեզվից ինչպես մասնավոր կյանքում, այնպես էլ հրապարակայնորեն՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան:

Հոդված 85

2. Դատական վարույթն իրականացվում է պետական լեզվով: Անձը, որը չի տիրապետում պետական լեզվին, ապահովվում է

թարգմանչով: Այն շրջաններում, որտեղ բնակչությունը չի տիրապետում պետական լեզվին, ապահովվում է պետական լեզվի և դատական վարույթի ուսուցման հետ կապված հարցերի լուծումը:

«ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Վավերացված է Վրաստանի Խորհրդարանի N1938 – II նորոշմամբ, 2005 թվականի հոկտեմբերի 13-ին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 30 ՀՈՂՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ

Արձանագրության 30-րդ հոդվածի համաձայն, մինչ Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնումը, տվյալ Կոնվենցիան գործում է միայն այն տարածքում, որի վրա տարածվում է Վրաստանի կենտրոնական իշխանության իրավասությունը:

Ստրասբուրգ, 1.II.1995

Սույն շրջանակային Կոնվենցիան ստորագրած պետությունը – Եվրոպայի Խորհրդի անդամ և այլ պետություններ,

հաշվի առնելով, որ Եվրոպայի Խորհրդի նպատակն է՝ հասնել նրա անդամների միջև առավել սերտ միասնության՝ հանուն նրանց ընդհանուր սեփականություն հանդիսացող իդեալների և սկզբունքների պաշտպանության և զարգացման,

հաշվի առնելով, որ այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանումն ու հետագա իրականացումն է,

ցանկանալով զարգացնել և կյանքի կոչել Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների ղեկավարների և պետությունների կառավարությունների Դեկլարացիայի դրույթները՝ ընդունված 1993 թվականի հոկտեմբերի 9-ին, Վիեննայում,

վճռական են պաշտպանել իրենց համապատասխան տարածքներում ազգային փոքրամասնությունների առկայությունը,

հաշվի առնելով, որ եվրոպական պատմության մեջ տեղ գտած ցնցումները ցույց տվեցին, որ ազգային փոքրամասնությունների պաշտպանությունն անհրաժեշտ է եվրոպական մայրցամաքում կայունության, ժողովրդավարական անվտանգության և խաղաղության համար,

հաշվի առնելով, որ բազմակարծ և իրապես ժողովրդավարական հասարակությունը պետք է ոչ միայն հարգի ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական ինքնությունը, այլև պետք է ստեղծի համապատասխան պայմաններ՝ արտահայտելու, պահպանելու և զարգացնելու այդ ինքնությունը,

հաշվի առնելով, որ հանդուրժողականության և երկխոսության պայմանների ստեղծումն անհրաժեշտ է, որպեսզի մշակութային բազմազանությունը լինի յուրաքանչյուր հասարակության հարստացման, այլ ոչ թե պառակտման աղբյուր և գործոն,

հաշվի առնելով, որ հանդուրժողական և բարգավաճ Եվրոպա ստեղծելը կախված է ոչ միայն պետությունների միջև համագործակցությունից, այլ նաև հիմնված է տեղական և տարածաշրջանային իշխանությունների միջև միջսահմանային համագործակցության վրա՝ հարգելով յուրաքանչյուր պետության սահմանադրական և տարածքային ամբողջականությունը,

հաշվի առնելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիան և դրա Արձանագրությունները,

հաշվի առնելով Միացյալ Ազգերի Կազմակերպության կոնվենցիաներում և հայտարարագրերում ու Եվրոպայի անվտանգության և համագործակցության Խորհրդի փաստաթղթերում, մասնավորապես՝ 1990 թվականի հունիսի 9-ի Կոպենհագենյան փաստաթղթում ներառված՝ ազգային փոքրամասնությունների պաշտպանության պարտավորությունը,

վճռականություն հայտնելով որոշել սկզբունքները, որոնք հարկավոր է պահպանել, և պարտավորությունները, որոնք բխում են դրանցից, անդամ պետություններում և այլ պետություններում, որոնք կարող են դառնալ սույն փաստաթղթի մասնակիցները, ազգային փոքրամասնությունների և նրանց պատկանող անձանց իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը ապահովելու համար՝ օրենքի գերակայության պահպանմամբ և տարածքային ամբողջականության ու պետական ինքնիշխանության հարգմամբ,

վճռականություն հայտնելով կյանքի կոչել սույն շրջանակային Կոնվենցիայով ամրագրված սկզբունքները,

ազգային օրենսդրության հիմքով և պետական քաղաքականությանը համապատասխան,

համաձայնվեցին ներքոհիշյալում.

ԲԱԺԻՆ I

Հոդված 1

Ազգային փոքրամասնությունների և այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը կազմում է մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժանելի մասը և որպես այդպիսին կայանում է միջազգային համագործակցության մաս:

Հոդված 2

Սույն շրջանակային Կոնվենցիայի դրույթներն իրագործվում են բարեխղճորեն, ըմբռնման և հանդուրժողականության ոգով, և պետությունների միջև բարիդրացիական, բարեկամական հարաբերությունների և համագործակցության սկզբունքներին համապատասխան,

Հոդված 3

1. Ազգային փոքրամասնության պատկանող ցանկացած անձ այդպիսին դիտարկվելու կամ չդիտարկվելու ազատ ընտրության իրավունք ունի, և այդ ընտրությունը կամ այդ ընտրության հետ կապված իրավունքների իրականացումը չպետք է ոտնահարի տվյալ անձին:

2. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք կարող են իրականացնել սույն շրջանակային Կոնվենցիայով ամրագրված սկզբունքներից բխող իրավունքներ և օգտվել ազատություններից ինչպես անհատապես, այնպես էլ այլ անձանց հետ միասին:

ԲԱԺԻՆ II

Հոդված 4

1. Կողմերը պարտավորվում են երաշխավորել ազգային փոքրամասնություններին պատկանող ցանկացած անձի՝ օրենքի առջև հավասարության և օրենքի կողմից հավասար պաշտպանության իրավունքը: Այս կապակցությամբ, ազգային փոքրամասնությանը պատկանելության հիմքով ցանկացած խտրականությունն արգելվում է:

2. Կողմերը պարտավորվում են անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ ձեռնարկել՝ խրախուսելու համար ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց և

երկրի բնակչության հիմնական խմբին պատկանող անձանց միջև բոլոր բնագավառներում լիարժեք և իրական հավասարություն ապահովելու համար տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքում: Այս կապակցությամբ Կողմերը պատշաճ կերպով հաշվի են առնում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց առանձնահատուկ կարգավիճակը:

3. Կետի դրույթներին համապատասխան ձեռնարկվող միջոցառումները չեն դիտարկվում որպես խտրականության ակտ:

Հոդված 5

1. Կողմերը պարտավորվում են նպաստել անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, որոնք ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կապահովեն սեփական մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև նրանց ինքնության հիմնական տարրերը, մասնավորապես՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու հնարավորությամբ:

2. Առանց վնաս հասցնելու սեփական ընդհանուր ինտեգրացիոն քաղաքականության զարգացման միջոցառումներին, Կողմերը ձեռնպահ են մնում քաղաքական և գործնական ցանկացած գործողություններից, որոնք ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ձուլման նպատակ ունեն՝ նրանց կամքին հակառակ, պաշտպանում են այդ անձանց նման ձուլմանն ուղղված ցանկացած գործողություններից:

Հոդված 6

1. Կողմերը խրախուսում են հանդուրժողականության և մշակույթների միջև երկխոսության ոգին, ինչպես նաև իրենց տարածքում բնակվող բոլոր անձանց միջև փոխադարձ հարգանքին, փոխըմբռնմանը և համագործակցությանը նպաստող արդյունավետ միջոցներ են ձեռնարկում՝ անկախ նրանց էթնիկական, մշա-

կութային, լեզվական կամ կրոնական պատկանելության, հատկապես կրթության, մշակույթի և տեղեկատվության միջոցների բնագավառում:

2. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել համապատասխան բոլոր միջոցառումները՝ պաշտպանելու անձանց, որոնք կարող էին սպառնալիքի կամ խտրականության ակտի, թշնամականության կամ բռնության գոհ դառնալ իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պատճառով:

Հոդված 7

Կողմերը ապահովում են ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի՝ խաղաղ հավաք անցկացնելու ազատության և ասոցիացիաների ազատության, կարծիք արտահայտելու ազատության և մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունքների հարգումը:

Հոդված 8

Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող ցանկացած անձի իրավունքը՝ ազատորեն դավանելու իր կրոնը կամ արտահայտել համոզմունքը, ինչպես նաև իրավունքը՝ ստեղծել կրոնական հաստատություններ, կազմակերպություններ և միություններ:

Հոդված 9

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնությանը պատկանող ցանկացած անձի՝ կարծիք արտահայտելու ազատության իրավունքը ներառում է որևէ կարծիքի հետևելու և փոքրամասնության լեզվով տեղեկություն կամ գաղափարներ ստանալու և փոխանակելու ազատություն՝ առանց հանրային իշխանության միջամտության և անկախ սահմաններից:

Իրենց իրավական համակարգերի շրջանակներում Կողմերը ապահովում են, որպեսզի ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք չենթարկվեն դեպի տեղեկատվության միջոցներ մուտքի խտրականության:

2. Կետը Կողմերին չի արգելում առանց որևէ խտրականության և օբյեկտիվ չափանիշներով ընկերությունների՝ ռադիոհեռարձակման, հեռուստատեսային հեռարձակման կամ կինեմատոգրաֆիական արտոնագրում մտցնել:

3. Կողմերը չեն խոչընդոտում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից տեղեկատվության տպագիր միջոցների ստեղծմանը և օգտագործմանը:

Ռադիոհեռարձակման և հեռուստատեսային հեռարձակման իրավական հիմքի շրջանակներում, որքան դա հնարավոր է նաև հաշվի առնելով կետի դրույթները, նրանք ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց սեփական լրատվության միջոց ստեղծելու և օգտագործելու հնարավորություն են տալիս:

4. Մեփական իրավական համակարգի շրջանակներում Կողմերը համապատասխան միջոցներ են ձեռնարկում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ տեղեկատվության միջոցներին հասանելիությունը դյուրացնելու համար՝ հանդուրժողականությունը խրախուսելու և մշակութային բազմակարծությունը ապահովելու նպատակով:

Հոդված 10

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնություններին պատկանող ցանկացած անձի իրավունքը՝ ազատորեն և առանց խոչընդոտի օգտվել սեփական փոքրամասնության լեզվից գրավոր և բանավոր, անձնական կյանքում և հասարակական վայրերում:

2. Շրջաններում զգալիորեն կամ ավանդական ներկայություն ունեցող, ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք,

Եթե այդ անձինք խնդրում են այդ մասին և նման խնդրանքները համապատասխանում են իրական անհրաժեշտությանը, Կողմերը կձգտեն, որքանով հնարավոր է, պայմաններ ապահովել, որոնք թույլ կտան այդ անձանց և ադմինիստրատիվ իշխանության հարաբերություններում օգտագործել փոքրամասնության լեզուն:

3. Կողմերը պարտավորվում են երաշխավորել ազգային փոքրամասնությանը պատկանող ցանկացած անձի իրավունքը՝ ամենասեղմ ժամկետներում իրեն հասկանալի լեզվով տեղեկություն ստանալ իր ձեռքակալության պատճառների, բնույթի և իր դեմ առաջադրված ցանկացած մեղադրանքի պատճառի մասին, ինչպես նաև պաշտպանություն իրականացնել այդ լեզվով՝ անհրաժեշտության դեպքում դրա համար ստանալով թարգմանչի անվճար օգնություն:

Հոդված 11

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող ցանկացած անձի՝ այդ փոքրամասնության լեզվով իր ազգանունից, անունից և հայրանունից օգտվելու իրավունքը, ինչպես նաև նրանց իրավական համակարգերով ամրագրված պահանջներով դրանց պաշտոնական ճանաչման իրավունքը;

2. Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող ցանկացած անձի՝ այդ փոքրամասնության լեզվով հանրային վայրերում անձնական բնույթի ցուցանակների, հայտարարությունների և այլ տեղեկության տեղադրման իրավունքը;

3. Ավանդաբար զգալի թվով՝ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված շրջաններում Կողմերը, իրենց իրավական համակարգերի շրջանակներում՝ ներառյալ, անհրաժեշտության դեպքում, այլ պետությունների հետ համաձայնեցմամբ, ապահովում են ավանդական տեղանունների,

փոդոցների անվանումների և տեղագրական այլ տեղեկատվության ցուցանակների տեղադրումը հստակ պայմաններով, բնակչության համար և փոքրամասնության լեզվով, եթե նման տեղեկատվության բավարար պահանջարկ կա:

Հոդված 12

1. Անհրաժեշտության դեպքում Կողմերը կրթության և գիտական հետազոտությունների բնագավառում անհրաժեշտ միջոցառումներ են ձեռնարկում՝ մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի մասին ինչպես իրենց ազգային փոքրամասնությունների, այնպես էլ բնակչության հիմնական խմբի գիտելիքների բարելավման նպատակով:

2. Այս համատեքստում Կողմերը, մասնավորապես, համապատասխան պայմաններ են ստեղծում ուսուցիչների վերապատրաստման, դպրոցական դասագրքերի ապահովման և տարբեր համայնքների ուսանողների և մանկավարժների միջև շփումների դյուրացման նպատակով:

3. Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար բոլոր մակարդակներում կրթության մատչելիության հավասար հնարավորությունների ապահովման համար:

Հոդված 13

1. Իրենց կրթական համակարգերի շրջանակներում Կողմերը ճանաչում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ կրթության բնագավառում իրենց սեփական մասնավոր հաստատությունները ստեղծելու և կառավարելու իրավունքը:

2. Այս իրավունքի իրականացումը Կողմերի ֆինանսական պարտավորությունների չի հանգեցնում:

Հոդված 14

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող ցանկացած անձի՝ իր փոքրամասնության լեզուն սովորելու իրավունքը:

2. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով զգալիորեն կամ ավանդաբար բնակեցված շրջաններում Կողմերը, որքան դա հնարավոր է իրենց կրթական համակարգերի շրջանակներում, բավարար պահանջարկի դեպքում ձգտում են ապահովել, որպեսզի ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք բավարար հնարավորություն ունենան սովորել իրենց փոքրամասնության լեզուն կամ կրթություն ստանալ այդ լեզվով:

3. Սույն հոդվածի դրույթները կյանքի են կոչվում՝ չոտնահարելով պետական լեզուն սովորելու կամ այդ լեզվով դասավանդելու իրավունքը:

Հոդված 15

Կողմերը պարտավորվում են ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ մշակութային, հասարակական կամ տնտեսական կյանքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցության համար, ինչպես նաև պետական գործերում, հատկապես այն, որոնք վերաբերում են նրանց:

Հոդված 16

Կողմերը ձեռնպահ են մնում այնպիսի միջոցառումների ձեռնարկումից, որոնք ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով բնակեցված որևէ շրջանում փոխելով բնակչության կառուցվածքային համամասնությունը, նպատակ ունեն ոտնահարել սույն շրջանակային Կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից բխող իրավունքները և ազատությունները:

Հոդված 17

1. Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ մշտապես այլ պետությունների տարածքում գտնվող անձանց հետ ազատ և խաղաղ միջսահմանային շփումներ հաստատելու և պահպանելու իրավունքների իրականացմանը, մասնավորապես այն անձանց, որոնց հետ նրանց կիսում են ընդհանուր էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական ժառանգություն:

2. Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ ազգային և միջազգային մակարդակներում ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությանը մասնակցելու իրավունքի իրականացմանը:

Հոդված 18

1. Կողմերը ջանում են, անհրաժեշտության դեպքում, երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր ստորագրել այլ պետությունների, մասնավորապես՝ հարևան պետությունների հետ, համապատասխան ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար:

2. Անհրաժեշտության դեպքում Կողմերը միջոցառումներ են ձեռնարկում՝ ուղղված միջսահմանային համագործակցության խթանմանը:

Հոդված 19

1. Կողմերը պարտավորվում են հետևել և կյանքի կոչել սույն շրջանակային Կոնվենցիայով ամրագրված սկզբունքները, անհրաժեշտության դեպքում դրանցում թույլատրելով միայն այնպիսի սահմանափակումներ կամ շեղումներ, որոնք նախատեսված են միջազգային-իրավական փաստաթղթերում, մասնավորապես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին

Կոնվենցիայում, այն չափով, որքանով դրանք վերաբերում են նշված սկզբունքներից բխող իրավունքներին և ազատություններին:

ԲԱԺԻՆ III

Հոդված 20

Սույն շրջանակային Կոնվենցիայով ամրագրված սկզբունքներից բխող իրավունքների և ազատությունների իրականացման ընթացքում ազգային փոքրամասնությանը պատկանող ցանկացած անձ պահպանում է ազգային օրենսդրությունը և հարգում է այլ անձանց իրավունքները, մասնավորապես՝ բնակչության հիմնական խմբին կամ ազգային այլ փոքրամասնություններին պատկանող անձանց:

Հոդված 21

Սույն շրջանակային Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես ցանկացած անհատ անձի որևէ իրավունք՝ զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որը հակասում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին, հատկապես պետությունների ինքնիշխան հավասարության, տարածքային ամբողջականության և քաղաքական ազատության սկզբունքներին:

Հոդված 22

Սույն շրջանակային Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մարդու որևէ իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակում կամ ոտնահարում, որոնք կարող էին ճանաչվել Պայմանավորվող ցանկացած Կողմի օրենսդրությանը համապատասխան կամ ցանկացած այլ Պայմանագիր, որի մասնակիցը հանդիսանում է տվյալ Կողմը:

Հոդված 23

Սույն շրջանակային Կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից բխող իրավունքներն ու ազատությունները այն չափով, որքանով դրանք հանդիսանում են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Կոնվենցիայի կամ դրա դրույթների առարկա, ընկալվում են որպես վերջինների համապատասխան դրույթներ:

ԲԱԺԻՆ IV

Հոդված 24

1. Եվրոպայի Խորհրդի Նախարարների խորհուրդը լիազորված է հետևել Պայմանավորվող Կողմերի կողմից սույն շրջանակային Կոնվենցիայի իրականացմանը:

2. Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող Կողմերը Կոնվենցիայի մեխանիզմների իրականացմանը մասնակցում են պայմաններով, որոնք նախատեսվում է որոշել:

Հոդված 25

1. Սույն շրջանակային Կոնվենցիայի՝ Պայմանավորվող որևէ Կողմի նկատմամբ ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում, վերջինը Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին է փոխանցում օրենսդրական և այլ միջոցառումների մասին լիարժեք տեղեկատվություն, որոնք ընդունվել են սույն շրջանակային Կոնվենցիայում ամրագրված սկզբունքների իրականացման համար:

2. Հետագայում յուրաքանչյուր Կողմ պարբերաբար և ամեն անգամ, Նախարարների կոմիտեից համապատասխան խնդրանքի ստացման դեպքում, Գլխավոր քարտուղարին է փոխանցում սույն շրջանակային Կոնվենցիայի իրականացման հետ կապված ցանկացած այլ տեղեկատվություն:

3. Գլխավոր քարտուղարը սույն հոդվածով նախատեսված դրույթների հիման վրա ստացված ամբողջ տեղեկատվությունը փոխանցում է Նախարարների կոմիտեին:

Հոդված 26

1. Սույն շրջանակային Կոնվենցիայով ամրագրված սկզբունքների իրականացման համար որևէ Կողմի ձեռնարկած միջոցառումները համապատասխան գնահատական ստանալուց հետո, Նախարարների կոմիտեինի օժանդակություն է ցուցաբերվում Խորհրդատվական կոմիտեի կողմից, որի անդամները ազգային փոքրամասնությունների պաշտպանության բնագավառում ճանաչված իրավասություն ունեն:

2. Խորհրդատվական այդ կոմիտեի կազմը, ինչպես նաև նրա աշխատանքի ընթացակարգերը հստակեցվում են Նախարարների կոմիտեի կողմից, սույն շրջանակային Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

ԲԱԺԻՆ V

Հոդված 27

Սույն շրջանակային Կոնվենցիան բաց է Եվրոպայի Խորհրդի անդամ-պետությունների ստորագրման համար:

Մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, այն նույնպես բաց է ստորագրման ցանկացած պետության համար, ում Նախարարների կոմիտեն կառաջարկի անել այն: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հավանության: Վավերացման, ընդունման կամ հավանության մասին փաստաթղթերը հանձնվում են Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին՝ պահպանման:

Հոդված 28

1. Սույն շրջանակային Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի Խորհրդի անդամ 12 պետությունների կողմից 27-րդ հոդվածի դրույթներին համապատասխան այս շրջանակային Կոնվենցիային միանալու համաձայնություն արտահայտելուց հետո, եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

2. Ցանկացած անդամ-պետության համար, որը հետագայում համաձայնություն կհայտնի միանալ սույն շրջանակային Կոնվենցիային, վերջինը ուժի մեջ կմտնի վավերացման, ընդունման կամ հավանության մասին փաստաթղթի՝ պահպանման հանձնելուց հետո, եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 29

1. Սույն շրջանակային Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց և պայմանավորվող պետությունների հետ խորհրդակցություններից հետո Եվրոպայի Խորհրդի Մինիստրների կոմիտեն, Եվրոպայի Խորհրդի Կանոնադրության 20-րդ հոդվածի (d) կետով սահմանված կարգով մեծամասնության կողմից ընդունված որոշմամբ կարող է առաջարկել միանալ սույն շրջանակային Կոնվենցիային Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետության, որը 7-րդ հոդվածի դրույթներին համապատասխան այն ստորագրելու առաջարկություն ստացելով՝ դեռևս չի արել այդ, ինչպես նաև Խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած այլ պետության:

2. Սույն շրջանակային Կոնվենցիային միացող ցանկացած պետության համար այն ուժի մեջ է մտնում միավորման մասին փաստաթուղթը Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին պահպանման հանձնելուց հետո, եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 30

1. Վավերացման, ընդունման կամ հավանության մասին փաստաթուղթը ստորագրելու կամ պահպանության հանձնելու պահին ցանկացած պետություն կարող է մատնանշել տարածք կամ տարածքներ, որոնց միջազգային հարաբերությունների համար պատասխանատվություն է կրում և որոնց նկատմամբ պետք է կիրառվի սույն շրջանակային Կոնվենցիան:

2. Ցանկացած պետություն կարող է հետագայում ցանկացած պահի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված դիմումով տարածել սույն շրջանակային Կոնվենցիայի իրականացումը դիմումում նշված ցանկացած այլ տարածքում: Այդ տարածքի նկատմամբ սույն շրջանակային Կոնվենցիայի իրականացումը ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից նման դիմում ստանալուց հետո, եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի դրույթների հիման վրա կատարված ցանկացած դիմում կարող է հետ կանչվել դիմումում նշված ցանկացած տարածքի նկատմամբ՝ Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման ճանապարհով: Նման հետկանչը ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից նման ծանուցում ստանալուց հետո, եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 31

1. Ցանկացած Կողմ կարող է ցանկացած պահի չեղյալ հայտարարել սույն շրջանակային Կոնվենցիան՝ այդ մասին ծանուցելով Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Չեղյալ հայտարարումը ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից նման ծանուցում ստանալուց վեցամսյա ժամկետը լրանալուց հետո՝ ամսվա առաջին օրը:

Հոդված 32

Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը կձանուցի Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին, սույն շրջանակային Կոնվենցիան ստորագրած այլ պետություններին, և նրան միացած բոլոր պետություններին.

ա. ցանկացած ստորագրման;

բ. պահպանման հանձնված՝ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին ցանկացած փաստաթղթի;

գ. սույն շրջանակային Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ցանկացած ժամկետի մասին՝ նրա 8, 29 և 30 հոդվածներին համապատասխան;

դ. ցանկացած այլ ակտի, ծանուցման կամ տեղեկացման մասին՝ կապված սույն շրջանակային Կոնվենցիայի հետ:

Ի վկայություն դրա ներքոստորագրյալներս, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցինք սույն շրջանակային Կոնվենցիան:

Իրականացված է 1995 թվականի փետրվարի 1-ին, Ստրասբուրգում, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ համարժեք ուժ ունեն, միակ օրինակով, որը տրվում է Եվրոպայի Խորհրդի արխիվ՝ պահպանման: Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները կուղարկի Եվրոպայի Խորհրդի անդամ Պետություններին, ինչպես նաև յուրաքանչյուր Պետությանը, որին առաջարկվել է ստորագրել սույն շրջանակային Կոնվենցիան կամ միանալ նրան:

**ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ
«ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»**

Հոդված 10. Վարույթի լեզուն

Դատական վարույթն իրականացվում է պետական լեզվով: Անձը, ով չի խոսում տիրապետում պետական լեզվին, ապահովվում է թարգմանչով: Թարգմանչի ծառայությունները վճարվում է Վրաստանի պետական բյուջեի միջոցների հաշվին:

**ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»**

Հոդված 2. Վրաստանի քաղաքացիների տեղական ինքնակառավարման իրականացման իրավունքը

1. Վրաստանի քաղաքացիները տեղական ինքնակառավարման իրավունքն իրականացնում են Սահմանադրությանը և սույն օրենքին համապատասխան:

2. Վրաստանի քաղաքացիները իրավունք ունեն `

ա) ընտրելու եւ ընտրվելու տեղական ինքնակառավարման մարմիններում, սահմանված կարգով, սույն օրենքով եւ ընտրական օրենսդրությանը համապատասխան;

բ) զբաղեցնել տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոններում ցանկացած պաշտոն Վրաստանի օրենսդրությանը համապատասխան պահանջները բավարարելու դեպքում:

գ) տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից ստանալ հանրային տեղեկատվություն:

դ) նախապես ծանոթանալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների նախագծերին, մասնակցել դրանց քննարկումներին, պահանջել որոշումների հանրային քննարկումներ և հրատարակություն:

ե) դիմել տեղական ինքնակառավարման մարմինների եւ պաշտոնատար անձանց;

ե) իրականացնել Վրաստանի օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 16. Ինքնակառավարման միավորների սեփական լիազորությունները

1. Տեղական ինքնակառավարման միավորն իրականացնում է սեփական լիազորությունները Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով, անկախ և իիր պատասխանատվությամբ: Ինքնակառավարման միավորների բացառիկ լիազորությունները սահմանվում են սույն օրենքով:

2. Ինքնակառավարման միավորների բացառիկ իրավասության տակ են հետևյալ հարցերը `

ա) տեղական ինքնակառավարման միավորին պատկանող գույքի տիրապետումը և տնօրինումը,

բ) տեղական ինքնակառավարման միավորին պատկանող հողային ռեսուրսների տիրապետումը և տնօրինումը,

գ) ինքնակառավարման միավորի բյուջեի քննարկումը և ընդունումը, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելը, բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների լսումները և գնահատականը,

դ) տեղական հարկերի և տուրքերի սահմանումը, օրենսդրությանը համապատասխան դրանց դրույքաչափերի որոշումը, դրանց հավաքագրումը,

ե) հողօգտագործման պլանավորումը, տեղական ինքնակառավարման միավորի գոտիավորումը (կանաչ գոտի, հանգստի գոտի, արդյունաբերական, առևտրային և այլ հատուկ գոտիներ), դրանց սահմանների որոշումը և փոփոխումը,

զ) տեղական նշանակության անտառային և ջրային ռեսուրսների կառավարումը,

է) ինքնակառավարման միավորի սահմաններում օրենսդրությանը համապատասխան շինարարության թույլտվություն տալը, հսկողությունը դրա նկատմամբ,

ը) փողոցային առևտրի կարգավորումը,

թ) արտաքին գովազդի տեղադրման կարգավորումը,

ժ) կոմունալ-բնակարանային ծառայությունների սակագների սահմանումը, ավտոկայանատեղերի վայրերի սահմանումը, բնա-

կավայրերում փողոցների լուսավորությունը, ջրամա-տակա-րարման և ջրահեռացման աշխատանքների պլանավորումը և իրականացումը, կենցաղային թափոնների հավաքումը և գործա-ծությունը կամ դրա իրականացման համար համայնքային գնումների կազմակերպումը, գերեզմանների խնամքը և պա-հպանությունը:

ժա) տեղական նշանակության ճանապարհների շինարարու-թյունը, պահպանությունը և զարգացման ապահովումը,

ժբ) սոցիալ մշակութային միջոցառումների իրականացում, աջակցություն տեղական օբյեկտների (արխիվային, գրադարաններ, թանգարաններ, կրթական և ուսումնական հաստատությունների և այլն) աշխատանքին,

ժդ) նախադպրոցական ուսումնական հաստատությունների ստեղծումը, դրանց կանոնադրությունների հաստատումը լիա-զորված անձի՝ որպես ներկայացուցիչ նշանակումը, հսկողությունը նրա գործունեության նկատմամբ,

ժե) Վրաստանի օրենսդրությանը համապատասխան ինքնա-կառավարման միավորի վարչատարածքային կառուցվածքի սա-հմանումը,

ժզ) սոցիալ տնտեսական զարգացման գերակայությունների, մունիցիպալ ծրագրերի և ինքնակառավարման պլանների սահ-մանումը

ժէ) ինքնակառավարման միավորի սահմաններում սոցիալա-կան ապահովության և առողջապահության ոլորտների ռեսու-րսների մոբիլիզացումը, համապատասխան միջոցառումների մշակումը և իրականացումը (մարդու առողջության համար անվտանգ շրջակա միջավայրի ստեղծում, առողջ ապրելակերպի ստեղծում, առողջության համար ռիսկային գործոնների որոշում) և դրանց մասին հասարակությանը տեղեկացնելը:

ժը) ինքնակառավարման միավորի հրդեհային անվտանգու-թյան ապահովումը,

ժթ) ինքնակառավարման միավորի տարածքում ճանապա-րհային երթևեկության պլանավորումը, բացառությամբ միջպետա-կան և ներպետական նշանակության ճանապարհների,

իդ) կարգավորող սահմանված կարգով Վրաստանի օրենս-դրությամբ հետ կապված հարցեր ը ժողովների, հանրահավաքների,

երթերի և ցույցերի անցկացման հետ կապված հարցերի կարգա-վորումը օրենսդրությանը համապատասխան,

զ) տեղական գնումների իրականացումը,

ը) փողոցների ու հրապարակների անվանակոչումը, դրանց համարակալումը համարակալումը,

3. Բացի սույն հոդվածի 2-րդ կետում նշված լիազո-րություններից, ինքնակառավարման միավորը լիազորված է ընդունել որոշումներ այն հարցերի վերաբերյալ, որոնք չեն հանդիսանում պետական այլ մարմինների իրավասությունը և օրենքով արգելված չեն ինքնակառավարման միավորի համար:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 6

Չի թույլատրվում է ստեղծել տարածքային կամ տարա-ծաշրջանային բնույթի կուսակցություններ:

Հոդված 11

Չի թույլատրվում սահմանափակել անդամակցությունը կուսակցությանը՝ կախված ռասայից, մաշկի գույնից, լեզվից, սեռից, դավանանքից, ազգությունից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, բնակության վայրից:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

Հոդված 2. Աշխատանքային հարաբերությունները

1. Աշխատանքային հարաբերություններ են համարվում աշխատողի կողմից գործատուի համար վճարման դիմաց

աշխատանքի կատարումը աշխատանքի կամզակերպչական կարգավորման պայմաններում:

2. Աշխատանքային հարաբերությունները ծագում են կողմերի ազատ կամարտահայտման և կողմերի հավասարության վրա հիմնված համաձայնության ձեռքբերմամբ:

3. Աշխատանքային հարաբերություններում արգելում է ցանկացած խտրականություն, կախված ռասայից, մաշկի գույնից, լեզվից, էթնիկական, սոցիալական ծագումից և ազգությունից, գույքային վիճակից, ծնունդից, բնակության վայրից, տարիքից, սեռից, սեռական կողմնորոշումից, հաշմանդամությունից, կրոնական կամ այլ միավորման անդամ լինելուց, ամուսնական կարգավիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից:

4. Խտրականություն է համարվում անձի ուղղակի կամ անուղղակի հետապնդումները որը նպատակ ունի կամ հանգեցնում է վախի մթնոլորտի, թշնամական, նվաստացուցիչ, արժանապատվությունը վիրավորելու իրավիճակի ստեղծմանը կամ այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վատթարացնում են անձի դրությունն այլ անձանց համեմատ, որոնք գտնվում են նույնատիպ պայմաններում:

5. Խտրականություն չի համարվում անձանց տարբերակման անհրաժեշտությունը՝ կախված աշխատանքի բնույթից, յուրահատկություններից կամ դրա իրականացման պայմաններից, որոնք հետապնդում են օրինական նպատակ և համարվում են անհրաժեշտ և համաչափ այդ նպատակներին հասնելու համար:

6. Աշխատանքային հարաբերություններում կողմերը պետք է հարեն մարդու իրավունքները և ազատությունները, որոնք սահմանված են Վրաստանի օրենսդրությամբ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

Հոդված 5. Արդարադատություն իրականացումը միայն դատարանի կողմից քաղաքացիների հավասարության հիման վրա

Քաղաքացիական գործերով արդարադատությունն իրակա-նացնում է միայն դատարանը՝ օրենքի և դատարանի առջև քաղաքացիների հավասարության հիման վրա:

Հոդված 9. Դատավարության հրապարականությունը և դատավարության լեզուն

4. Դատակավարությունն իրականացվում է պետական լեզվով: Անձը, ով չի տիրապետում պետական լեզվին, ապահովվում է թարգմանչով:

ՎՐԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

Հոդված 11. Դատավարության իրականացումը պետական լեզվով

Քրեական դատավարությունն իրականացվում է վրացերենով, Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունում՝ նաեւ աբխազերենով: Դատավարության մասնակիցը, ով չի տիրապետում պետական լեզվին, ապահովվում է թարգմանչով սույն օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 38. Մեղադրյալի իրավունքները և պարտականությունները

1. Ձերբակալման պահին, կամ, եթե ձերբակալում չի իրականացվել, որպես մեղադրյալ ներգրավելու պահին մեղադրյալը անմիջապես, ինչպես նաև մինչև ցանկացած հարցաքննություն, պետք է իրեն ծանոթ լեզվով տեղեկացված լինի, թե Վրաստանի

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ
«ՈՐԴԵԳՐՄԱՆ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Քրեական օրենսգրքով նախատեսված ինչ հանցագործության վերաբերյալ նրա նկատմամբ կա հիմնավոր կասկած: Մեղադրյալին պետք է փոխանցվի ձերբակալման մասին արձանագրության պատճենը, իսկ եթե անձը չի ձերբակալվել՝ մեղադրական որոշումը:

8. Մեղադրյալը իրավունք ունի հարցաքննության և այլ քննչական գործողություններ կիրառելու ընթացքում օգտվելու թարգմանիչի ծառայություններից պետական միջոցների հաշվին, եթե չգիտի կամ բավարար չափով չի տիրապետում քրեական դատավարության լեզվին կամ ունի այնպիսի ֆիզիկական արատ, որն անհնար է դարձնում նրա հետ հաղորդակցությունն առանց թարգմանիչի:

Հոդված 45. Պարտադիր պաշտպանություն

Մեղադրյալը պարտադիր պաշտպան է ունենում՝

բ) եթե չի տիրապետում քրեական դատավարության լեզվին:

**Հոդված 49. Վկաների իրավունքներն ու պարտականու-
թյունները**

1. Վկան իրավունք ունի՝

բ) ցուցմունք տալ մայրենի լեզվով կամ իր ցանկությամբ այլ լեզվով, կամ պետական միջոցների հաշվին օգտվել թարգմանից, եթե չգիտի կամ բավարար չափով չի տիրապետում քրեական դատավարության լեզվին:

Հոդված 277. Դատավճռի հրապարակումը

2. Եթե մեղադրյալը չգիտի կամ բավարար չափով չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, դատավճիռը հրապարակումից անմիջապես հետո կամ գուգահեռաբար պետք է թարգմանվի իր մայրենի լեզվով կամ այլ մեղադրյալին ծանոթ լեզվով:

Հոդված 18. Որդեգրման վերաբերյալ եզրակացությունը

1. Գործակալությունը, սոցիալական աշխատողի անցկացրած ուսումնասիրության հիման վրա, մեկշաբաթյա ժամկետում պատրաստում է եզրակացություն՝ հաշվառման վերցնելով որդեգրողին:

2. Որդեգրման եզրակացության մեջ նշվում է՝

ա) որդեգրողի կենսագրական տվյալները, անհատական բնութագիրը, սոցիալական կարգավիճակը եւ առողջական վիճակը, երեխայի որդեգրման դրդապատճառը,

բ) որդեգրվողի կենսագրական տվյալները, անհատական բնութագիրը, սոցիալական կարգավիճակը եւ առողջական վիճակը,

3. Անհրաժեշտության դեպքում, որդեգրման եզրակացությունը պետք է նախատեսի որդեգրվողի դաստիարակության հնարավորություն նրա էթնիկական և մշակութային տարածքում:

4. Երիեխային Վրաստանի տարածքում որդեգրելու դեպքում տեղի հոգաբարձության եւ խնամակալության մարմնի եզրակացությունը 1 շաբաթյա ժամկետում ուղարկվում է շրջանային (քաղաքային) դատարան:

5. Միջազգային որդեգրման դեպքում Գործակալության պատրաստած եզրակացությունն 1 շաբաթյա ժամկետում ուղարկվում է շրջանային (քաղաքային) դատարան:

6. Որդեգրման եզրակացության նախապատրաստման և տրման կարգը սահմանում է նախարարը:

Հոդված 31. Որդեգրման եզրակացության նախապատրաստումը և որոշում ընդունելը

1. Որդեգրման վերաբերյալ որոշման ընդունումը խնամակալության և հոգաբարձության մարմնի լիազորությունն է: Որդեգրման որոշումն ընդունվում է որդեգրվողի պահանջների և որդեգրող ցանկացող անձանց հնարավորությունների ուսումնասիրության և նախապատրաստված եզրակացության հիման վրա:

2. Որդեգրման որոշում կայացնելու դեպքում պետք է պահպանվեն հետևյալ սկզբունքները.՝

ա) Պետք է հաշվի առնվի որդեգրողի ցանկությունը՝ կապված որդեգրվողի սեռի, տարիքի, առողջական վիճակի հետ,

բ) հնարավորության սահմաններում ապահովել որդեգրվողի կրթությունը առավել մոտ էթնիկական, կրոնական և մշակութային տարածքում,

գ) որդեգրողների ընտանիքում որդեգրված և կենսաբանական երեխաների թիվը չպետք է գերազանցի յոթը,

դ) 10 տարին լրացած երեխայի որդեգրումն իրականացվում է միայն վերջինիս ցանկությամբ,

ե) չի թույլատրվում բաժանել քրոջը և եղբորը (քույրերին և եղբայրներին), բացառությամբ այն դեպքերի, երբ բաժանումը բխում է նրանց շահերից;

զ) որդեգրող հոր/մոր և որդեգրվող երեխայի միջև տարիքային տարբերությունը պետք է լինի 15 տարուց ոչ պակաս:

3. Որդեգրման ընթացակարգերը սահմանվում են նախարարի հրամանով:

ՎՐԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

Հոդված 14. Վարչական վարույթի լեզուն

Վրաստանի վարչական վարույթի լեզուն վրացերենն է, իսկ Աբխազիայում՝ նաև աբխազերենը:

Հոդված 43. Անհատական տվյալների մշակման կարգը

Պետական հաստատությունը պարտավոր է՝

ա) հավաքել, մշակել և պահպանել միայն այն տվյալները, որոնց հավաքման համար հաստատությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն լիազորված է օրենքով, և որոնց հավաքումն անհրաժեշտ է տվյալ հաստատության լիազորություններն իրականացնելու համար,

բ) չթույլատրել այնպիսի բնույթի անձնական տվյալների հավաքումը, մշակումը, պահպանումը և տրամադրումը, որոնք

կապված են անձի սեռական, կրոնական կամ էթնիկական ծագման, քաղաքական հայացքների կամ աշխարհայացքի հետ:

Հոդված 73. Վարչական վարույթի կողմերը

1. Վարչական վարույթի կողմ կարող է լինել վարչական մարմինը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

2. Վարչական վարույթն իրականացվում է վարչական մարմնի կողմից:

3. Վարչական վարույթն իրականացվում է վրացերենով, իսկ Աբխազիայում՝ նաև աբխազերենով:

4. Եթե շահագրգիռ կողմի հայտարարությունը կամ այլ փաստաթուղթը ներկայացված է ոչ պետական լեզվով, ապա շահագրգիռ կողմը պարտավոր է վարչական մարմնի կողմից նշված ժամկետում ներկայացնել հայտարարության կամ այլ փաստաթղթի նոտարական վավերացմամբ թարգմանությունը:

5. Եթե օրենքով նախատեսված է վարչական մարմնի կողմից որևէ գործողության իրականացման ժամկետ, ապա այդ ժամկետը սկսվում է միայն նոտարական վավերացմամբ տարգմանությունը ներկայացնելու պահից, եթե թարգմանությունն անհրաժեշտ է

6. Եթե օրենքով նախատեսված է շահագրգիռ կողմի հայտարարության կամ այլ փաստաթղթի ներկայացման ժամկետ, ապա ժամկետը համարվում է պահպանված նույնիսկ այն դեպքում, եթե հայտարարությունը կամ այլ փաստաթուղթը ներկայացվել է ոչ պաշտոնական լեզվով:

7. Վարչական մարմինը կարող է թարգմանության համար ժամկետ նշանակել, որը 3 օրից պակաս չի կարող լինել:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

Հոդված 74. Նախընտրական հավաքները և ցույցերը

1. Նախընտրական շրջանում հավաքների և ցույցերի անցկացումը կարգավորվում է սույն օրենքով:

2. Նախընտրական շրջանում երթերի և ցույցերի անցկացումը, եթե դրանք խոչընդոտում են երթևեկությանը և մարդկանց տեղաշարժին, կազմակերպիչները պարտավոր են միջոցառումից 2 օր առաջ նախապես գրավոր տեղեկացնել տեղական ինքնակառավարման մարմիններին նշված միջոցառման անցկացման տեղի և վայրի մասին: Նրանք, իրենց հերթին, ապահովում են միջոցառման անվտանգությունը:

3. Չի թույլատրվում ցույցի կամ հավաքի արգելումը կամ դադարեցումը, բացառությամբ այն դեպքերի, երբ հնչում են կոչեր՝ ուղղված մարդու իրավունքների և ազատությունների ոտնահարմանը, երկրի անկախության և տարածքային ամբողջականության խախտմանը, ազգային, կրոնական, էթնիկական, տեղական և սոցիալական պառակտմանը, սահմանադրական կարգի բռնի փոփոխմանը կամ տապալմանը, ինչպես նաև պատերազմի և բռնության քարոզչությանը:

4. Տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են աջակցել ընտրական սուբյեկտներին ընտրողների հետ հանդիպմանը, հրապարակային քննարկումների և դեբատների, հավաքների և ցույցերի կազմակերպմանը, ապահովել դրանց անվտանգությունը:

5. Մասսայական ընտրական միջոցառումների անցկացման համար ընտրական հանձնաժողովներին անհատույց տրամադրվում են պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող տարածքներ:

6. Ընտրատարածքային ընտրական, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված տարածքի սահմաններում, սահմանում է ընտրական սուբյեկտների կողմից ընտրական միջոցառումների անցկացման գրաֆիկը՝ համա-ձայնեցնելով նրանց հետ (ժամերի համընկման կամ անհա-մաձայնության դեպքում գրաֆիկը սահմանվում է վիճակա-հանությամբ):

10. Ընտրական սուբյեկտների գրանցման պահից մինչև քվեարկության ավարտն արգելվում է տեղական ինքնակառավարման մարմիններում, ոստիկանությունում և դատախազությունում պաշտոնատար անձանց փոփոխումը՝ բառացությամբ ժամկետը լրանալու և նրանց կողմից օրենքը խախտելու դեպքերի:

Հոդված 75. Քարոզչական նյութերը

1. Վրաստանի կենտրոնական եւ տարածքային ընտրական հանձնաժողովները, պետական կառավարման համապատասխան ամրմինների հետ համատեղ, ոչ ուշ, քան ընտրությունների օրվանից 10 օր առաջ, իսկ կրկնակի ընտրությունների դեպքում՝ ընտրու-թյունների օրվանից 5 օր առաջ, ապահովում են ընտրական հանձնաժողովների տեղեկատվական նյութերի տպագրումը և տարածումը:

2. Ընտրվող սուբյեկտները և նրանց աջակցող անձինք իրավաւո են ելույթ ունենալ ապագա ծրագրերով: Ընտրական ծրագիրը չպետք է քարոզի պատերազմ և բռնություն, կոչեր՝ ուղղված հասարակական և պետական կարգի բռնի տապալմանը, Վրաստանի տարածքային ամբողջականության խախտմանը, ազգային պառակտմանը կամ թշնամանքին, կրոնական կամ էթնիկական հակադրությանը:

3. Տպագիր քարոզչական նյութերը կարող են փակցվել վրա շենքերի եւ այլ հաստատությունների վրա՝ դրանց սեփականատերերի համաձայնությամբ:

4. Արգելվում է քարոզչական պաստառներ փակցնելու կրոնական հաստատությունների վրա, պետական կառավարման մարմինների շենքերի ներքին և արտաքին հատվածներում, տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների, դատախազությունների, ոստիկանության շենքերի, ինչպես նաև ճանապարհային նշանների վրա: Այս շինությունների ցանկը հրապարակվում է ընտրության օր նշանակելուց 5 օր առաջ: Տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են տեղեր ապահովել կամ ստենդներ տեղադրել ընտրական նյութերի փակցման համար: Ստենդները պետք է այնպես տեղադրվեն, որպեսզի ընտրական բոլոր սուբյեկտների համար ապահովվեն հավասար պայմաններ: Արգելվում և օրենքով պատժվում է ընտրական նյութերի փոկումը, պատռումը կամ սոսնձումը, եթե դրանք պակցված են օրենքով չարգելված վայրում:

5. Տպագրված քարոզչական նյութերի վրա պետք է նշել այն կազմակերպությունների, արտադրողների եւ հաճախորդների անունները եւ հասցեները, սերիական համարը եւ տրման

ամսաթիվը, տպաքանակը: Արգելված տպագիր քարոզչական նյութերի տարածումն առանց վերը նշված տեղեկատվության:

6. Տպագիր նախընտրական քարոզարշավի օրինակները պետք է ներկայացվեն այն ընտրական հանձնաժողովին, որտեղ գրանցված է ընտրական սուբյեկտը:

7. Համապատասխան ընտրական սուբյեկտը պարտավոր է ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման օրվանից 15 օրվա ընթացքում, հանել բոլոր նախընտրական նյութերը, հակառակ դեպքում նա կենթարկվի սույն օրենքով սահմանված պատասխանատվության:

ՎՐԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 109. Կանխամտածված սպանություն ծանրացուցիչ Հանգամանքներով

1. Կանխամտածված սպանություն.

ա) (բացառված)

բ) որպես պատանդ առևանգված մարդու նկատմամբ;

գ) այլ անձանց կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի գիտակցմամբ;

դ) այլ հանցագործություն ծածկելու կամ դրա կատարումը թեթևացնելու նպատակով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասնմեկին տասնչորս տարի ժամկետով:

2. Կանխամտածված սպանություն.

ա) հանցավորի համար ակնհայտ հղի կնոջ նկատմամբ;

բ) հանցավորի համար ակնհայտ անձափառասի կամ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ;

գ) խուլիզանական դրդապատճառներով;

դ) ռասսայական, կրոնական, ազգային կամ էթնիկական անհանդուրժողականության հետևանքով;

ե) անձանց խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներեքից տասնյոթ տարի ժամկետով:

3. Կանխամտածված սպանություն.

ա) երկու կամ ավելի անձանց;

բ) առանձին դաժանությամբ;

գ) շահադիտական դրդապատճառներով կամ վարձկանությամբ;

դ) զոհի մարմնի օրգանները, օրգանների մասերը կամ հյուսվածքները փոխպատվաստման կամ այլ նպատակներով օգտագործելու նպատակով;

ե) ոչ մեկ անգամ (բացառությամբ սույն Օրենսգրքի 110-114 հոդվածներով նախատեսված սպանությունների);

զ) կապված զոհի կամ նրա մերձավորների կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասնվեցից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ:

Ծանոթություն. Սույն Օրենսգրքում մերձավոր են համարվում. ծնողը, որդեգիրը, երեխան, որդեգրված երեխան, տատը, պապը, թոռը, քույրը, եղբայրը, ամուսինը (կինը):

Հոդված 117. Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս հասցնելը

1. Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս հասցնելը, այսինքն՝ մարմնական ծանր վնասվածք հասցնելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, լսողության, խոսքի կամ որևէ այլ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ, հոգեկան հիվանդություն, հղիության ընդհատում, դեմքի անջնջելի այլանդություն կամ առողջությանը հասցված կյանքի համար վտանգավոր այլ վնաս՝ գուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ

հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը հանգեցրել է մահվան՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից ութ տարի ժամկետով:

3. Առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս հասցնելը՝ կատարված՝

ա) կապված տուժողի կամ նրա մերձավորների կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ;

բ) որպես պատանդ առևանգված մարդու նկատմամբ;

գ) շատերի կյանքի կամ առողջության համար վտանգավոր եղանակով;

դ) այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից յոթ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված արարքը, որը հանգեցրել է մահվան՝ պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից մինչև ութ տարի ժամկետով:

5. Առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս հասցնելը՝ կատարված՝

ա) հանցավորի համար ակնհայտ հղի կնոջ նկատմամբ;

բ) հանցավորի համար ակնհայտ անչափահասի կամ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ;

գ) խուլիզանական դրդապատճառներով;

դ) ռասսայական, կրոնական, ազգային կամ էթնիկական անհանդուրժողականության հետևանքով;

ե) անձանց խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից ինը տարի ժամկետով:

6. Սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված արարքը, որը հանգեցրել է մահվան՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասը տարի ժամկետով:

7. Առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս հասցնելը՝ կատարված՝

ա) երկու կամ ավելի անձանց նկատմամբ;

բ) առանձին դաժանությամբ;

գ) շահադիտական դրդապատճառներով կամ վարձկանությամբ;

դ) տուժողի մարմնի օրգանները, օրգանների մասերը կամ հյուսվածքները փոխպատվաստման կամ այլ նպատակներով օգտագործելու նպատակով;

ե) ոչ մեկ անգամ (բացի սպանությունը՝ նախատեսված սույն Օրենսգրքի 110-114 հոդվածներով);

զ) նախկինում կատարված սպանության համար՝ նախատեսված սույն Օրենսգրքի 108-109 հոդվածներով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ իննից տասներկու տարի ժամկետով:

8. Սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված արարքը, որը հանգեցրել է մահվան՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասներեք տարի ժամկետով:

Հոդված 126. Բռնություն

1. Միստեմատիկ ծեծը կամ այլ կարգի բռնությունը, որոնք տուժողին պատճառել են ֆիզիկական կամ հոգեկան տառապանք, բայց չեն առաջացրել սույն Օրենսգրքի 117 կամ 118 հոդվածներով նախատեսված հետևանքներ՝

պատժվում են մինչև երկու տարի ժամկետով ազատության սահմանափակմամբ կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Նույն գործողությունները, որոնք կատարվել են՝

ա) երկու կամ ավելի անձանց նկատմամբ;

բ) հանցավորի համար ակնհայտ հղի կնոջ նկատմամբ;

գ) կապված տուժողի կամ նրա մերձավորների ծառայողական գործունեության հետ;

դ) ակնհայտ անչափահասի, անօգնական վիճակում գտնվող, կամ հանցագործից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ;

ե) որպես պատանդ առևանգված մարդու նկատմամբ;

զ) վարձկանությամբ;

է) ռասայական, կրոնական, ազգային կամ էթնիկական անհանդուրժողականության հետևանքով;

ը) պաշտոնական դիրքը չարաշահելով՝

պատժվում են ազատագրվում՝ չորսից վեց տարի ժամկետով, պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հոդված 144¹. Խոշտանգում

1. Խոշտանգումը՝ անձի, նրա մերձավոր հարազատի կամ նրանից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող այլ անձի նկատմամբ ստեղծված պայմաններ, որոնք իրենց բնույթով, պարբերականությամբ կամ ժամկետով առաջացնում են ֆիզիկական ուժեղ ցավ կամ մտավոր կամ բարոյական տառապանք, և որոնց նպատակը տեղեկություն, ապացույց կամ խոստովանություն ստանալն է, անձին սպառնալը կամ հարկադրելը, կամ պատժելը անձի կամ այլ անձի կողմից կատարված կամ ենթադրաբար կատարված արարքի համար՝

պատժվում է ազատագրվում՝ յոթից տասը տարի ժամկետով, տուգանքով:

2. Նույն գործողությունները՝ կատարված՝

ա) պաշտոնատար կամ նման հավասարեցված անձի կողմից;

բ) պատոնական դիրքի չարաշահմամբ;

գ) երկու կամ ավելի անձանց նկատմամբ;

դ) մարդկանց խմբի կողմից;

ե) մարդկանց իրավահավասարության սկզբունքի խախտմամբ՝ նրանց ռասայի, մաշկի գույնի, լեզվի, սեռի, կրոնի, ազգային, էթնիկական, սոցիալական պատկանելության, ծագման, բնակության վայրի, գույքային կամ դասային կարգավիճակի պատճառով;

զ) հանցավորի համար ակնհայտ հղի կնոջ, անչափահասի, կալանքի կամ ազատության սահմանափակման այլ ձևի մեջ գտնվող անձի, անօգնական վիճակում կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ;

է) վարձկանությամբ;

ը) որպես պատանդ առևանգված մարդու նկատմամբ՝

պատժվում են ազատագրվում՝ իննից տասնհինգ տարի ժամկետով, պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև հինգ տարի ժամկետով:

3. Նույն գործողությունները՝ կատարված կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում են ազատագրվում՝ տասներկուսից տասնյոթ տարի ժամկետով, պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև հինգ տարի ժամկետով:

Հոդված 144³. Մտորացուցիչ կամ անմարդկային վերաբերմունք

1. Անձին ստորացնելը կամ հարկադրելը, անմարդկային դրության մեջ դնելը, արժանապատվությունն ու պատիվը ռոտնահարելը, որոնք առաջացնում են ուժեղ ֆիզիկական ցավ, մտավոր և բարոյական տառապանք՝

պատժվում է տուգանքով, մինչև երեք տարի ազատության սահմանափակմամբ կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Նույն գործողությունները՝ կատարված՝

ա) պաշտոնատար կամ նրան հավասարեցված անձի կողմից;

բ) պաշտոնական դիրքի չարաշահմամբ;

գ) երկու կամ ավելի անձանց կողմից;

դ) անձանց խմբի կողմից;

ե) մարդկանց իրավահավասարության սկզբունքի խախտմամբ՝ նրանց ռասայի, մաշկի գույնի, լեզվի, սեռի, կրոնի, ազգային, էթնիկական, սոցիալական պատկանելության, ծագման, բնակության վայրի, գույքային կամ դասային կարգավիճակի պատճառով;

զ) հանցավորի համար ակնհայտ հղի կնոջ, անչափահասի, կալանքի կամ ազատության սահմանափակման այլ ձևի մեջ գտնվող անձի, անօգնական վիճակում կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ;

է) վարձկանությամբ;

ը) որպես պատանդ առևանգված մարդու նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից վեց տարի ժամկետով, պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև հինգ տարի ժամկետով կամ առանց դրա:

Ծանոթություն: Սույն օրենսգրքի 144¹-144³ հոդվածներով նախատեսված արարքների վրա սույն Օրենսգրքի 71 հոդվածի համար նախատեսված վաղեմության ժամկետը չի տարածվում:

Հոդված 258. Մահացածի նկատմամբ անհարգալից

վերաբերմունք

1. Դիակի կամ հուղարկավորության վայրի պղծումը, ինչպես նաև վերգետնյա հուշարձանի կամ այլ կառույցի ոչնչացումն ու

վնասումը,– պատժվում է տուգանքով կամ մինչև մեկ տարի ժամկետով ուղղիչ աշխատանքով, կամ մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկմամբ:

2. Գերեզմանում կամ հուղարկավորության վայրի մակերեսին գտնվող առարկաների գողությունը,– պատժվում է տուգանքով կամ մինչև երկու տարի ժամկետով ազատազրկմամբ:

3. Նույն այդ գործողությունները, կատարված՝

ա) անձանց խմբի;

բ) ռասայական, կրոնական, ազգային կամ էթնիկական անհանդուրժողականության դրդապատճառներով;

գ) բռնության կամ բռնության սպառնալիքի գործադրմամբ՝

պատժվում է մինչև երեք տարի ժամկետով ազատության սահմանափակմամբ կամ ազատազրկմամբ՝ մինչև երեք տարի ժամկետով:

Հոդված 407. Ցեղասպանություն

Ցեղասպանություն, այսինքն համաձայնեցված ծրագրով գործողություն՝ ազգային, էթնիկական, ռասայական, կրոնական կամ որևէ այլ պատկանելությամբ միավորված խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակով՝ այդ խմբի անդամներին սպանելը, նրանց առողջությանը ծանր վնաս պատճառելը, մտածված կերպով նրանց համար կյանքի ծանր պայմաններ ստեղծելը, բռնությամբ ծնելիության կրճատումը կամ երեխաներին հարկադրաբար էթնիկական մի խմբից այլ խմբի հանձնելը՝

պատժվում է տասներկուսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ:

Հոդված 408. Մարդկության դեմ հանցանք

Մարդկության դեմ հանցանք, այսինքն քաղաքացիական բնակչության կամ քաղաքացիական անձանց դեմ լայնամասշտաբ կամ պարբերական հարձակման միջոցով կատարված ցանկացած

գործողություն՝ սպանելը, մարդկանց զանգվածային ոչնչացումը, առողջությանը ծանր վնաս հասցնելը, արտաքսումը, ապօրինի ազատագրվումը, խոշտանգումը, բռնաբարությունը, ստրկացնելը, մարմնավաճառությանը հարկադրելը, հարկադրական հղիությունը, բռնությամբ ստերիլիզացնելը, մարդկանց խմբի դեմ հալածանքը՝ քաղաքական, ռասսայական, ազգային, էթնիկական, մշակութային, կրոնական, սեռական կամ այլ պատկանելության պատճառով, մեկուսացումը կամ մարդուն ֆիզիկական կամ մտավոր լուրջ վնաս հասցնող այլ անմարդկային արարքները՝

պատժվում են ազատագրվմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով կամ ցմահ ազատագրվմամբ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 6. Մշակութային գործունեության մարդու իրավունքը

Սահմանադրության համաձայն, մշակութային գործունեությունը Վրաստանում համարվում է մարդու անքակտելի իրավունք: Վրաստանի քաղաքացիները հավասար են մշակութային կյանքում՝ անկախ նրանց ազգային, էթնիկական, կրոնական կամ լոգվական պատկանելությունից:

Հոդված 9. Ստեղծագործական գործունեության ազատություն և անկախություն

Չի թույլատրվում ստեղծագործական գործընթացին միջամտությունը, ստեղծագործական գործունեության գրաքննությունը, ստեղծագործական աշխատանքի վրա կալանք դնելը և դրա տարածման արգելումը, բացառությամբ դեպքերի, երբ դրանք խախտում են այլ մարդու իրավունքները և օրինական շահերը, հրահրում են ազգային, էթնիկական, կրոնական և ռասսայական

ատելություն, քարոզում են պատերազմ և բռնություն, քարոզում են պոռնոգրաֆիա:

Հոդված 10. Մշակութային ինքնության մարդու իրավունքը

Յուրաքանչյուր մարդ ունի մշակութային ինքնության պաշտպանության և գեղարվեստական-գեղագիտական կողմնորոշման ազատ ընտրության իրավունք:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 6

1. Չի թույլատրվում հիվանդի նկատմամբ խտրականությունը ռասսայի, մաշկի գույնի, սեռի, դավանանքի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային, էթնիկական կամ սոցիալական պատկանելության, ծագման, սեփականության և դասային կարգավիճակի, բնակության վայրի, հիվանդության, սեռական կողմնորոշման կամ անձնական բացասական տրամադրության հիման վրա:

2. Չի թույլատրվում բժշկական օգնության ժամանակ խտրականությունը կալանքի կամ ազատության սահմանփակման հաստատությունում գտնվող հիվանդի նկատմամբ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 2. Եզրույթների (տերմինների) սահմանում

Մույն օրենքում օգտագործված եզրույթները (տերմինները) ունեն հետևյալ նշանակությունը.

թ) Հավատարմագրում – բարձրագույն ուսումնական հաստատության ուսումնական ծրագրերի հավատարմագրման

չափորոշիչներին համապատասխանության սահմանման ընթացակարգ, որի նպատակն է պարբերական ինքնագնահատման հաստատումը՝ կրթության որակի բարձրացման համար և որակի ապահովման մեխանիզմների զարգացման նպատակով, և որը կապված է պետական ֆինանսավորման ստացման հետ, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված կրթական որոշ ծրագրերի իրականացումը:

Հոդված 3. Բարձրագույն կրթության նպատակները

1. Վրաստանում բարձրագույն կրթության հիմնական նպատակներ են.

ա) վրացական և համաշխարհային մշակութային արժեքների ձևավորման խթանումը, կողմնորոշում դեպի ժողովրդավարական և մարդասիրական գաղափարները, որոնք անհրաժեշտ են քաղաքացիական հասարակության գոյության և նրա զարգացման համար;

բ) անձի շահերին և հետաքրքրություններին համապատասխան բարձրագույն կրթություն ստանալու պահանջի բավարարումը, որակավորման բարձրացում և վերապատրաստումը;

գ) անհատական պոտենցիալի իրացումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը, ժամանակակից պահանջներին համապատասխան իրավասությամբ անձանց պատրաստումը, ներքին և արտաքին աշխատանքային շուկաներում բարձրագույն կրթություն ունեցող անձանց մրցունակության ապահովումը, ուսանողների և լայն հասարակայնության պահանջներին համապատասխան բարձրորակ բարձրագույն կրթության առաջարկումը շահագրգիռ անձանց;

դ) գիտական նոր անձնակազմի պատրաստում և վերապատրաստում, գիտական ուսումնասիրությունների համար պայմանների ստեղծում, ապահովում և զարգացում՝ պետության զարգացման և հենց բարձրագույն կրթական համակարգի կենսունակության ապահովման համար;

ե) ուսանողների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական անձնակազմի շարժունության խրախուսում:

2. Սույն օրենքի 1-ին կետով նախատեսված նպատակներին հասնելու համար պետությունն ապահովում է.

ա) բարձրագույն կրթության առկայությունը և բաց բնույթը; ուսուցման, դասավանդման և հետազոտությունների ակադեմիական ազատությունը;

բ) ամբողջ կյանքի ընթացքում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը;

գ) բարձրագույն կրթության և գիտության ինտեգրումը;

դ) որակի ապահովման համակարգի ձևավորումը, որն իր մեջ ներառում է հավատարմագրման համակարգի և բարձրագույն ուսումնական հաստատություններում որակյալ կառավարման (ապահովման) ծառայությունների գործողությունը;

ե) ուսուցման, դասավանդման և գիտական հետազոտությունների միասնական եվրոպական կրթական և հետազոտական տարածքում, ինչպես նաև համագործակցության միջազգային այլ համակարգերում լիիրավ մասնակցությունը;

զ) բարձրագույն ուսումնական հաստատության ինքնավարությունը;

է) բարձրագույն ուսումնական հաստատությունում որոշումների ընդունման և դրանց իրականացմանը հետևելու գործընթացին ակադեմիական անձնակազմի և ուսանողների մասնակցությունը;

ը) բարձրագույն կրթության բնագավառում խտրականության արգելումը, այդ թվում՝ ակադեմիական, կրթական կամ էթնիկական պատկանելության և/կամ համոզմունքների, սեռի, սոցիալական ծագման և այլ բնույթի;

թ) բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման և այդ հաստատությունում մրցույթների անցկացման հրապարակայնությունը և թափանցիկությունը;

ժ) այլ պայմանների ստեղծումը, որոնք կնպաստեն սույն օրենքի առաջին կետով նախատեսված նպատակներին հասնելուն:

3. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված նպատակներին հասնելու համար բարձրագույն ուսումնական հաստատությունը.

ա) անձին նախապատրաստում է այնպիսի մասնագիտական գործունեության համար, որը պահանջում է գիտական գիտելիքներ և գիտական մեթոդներ;

բ) հոգ է տանում իր անձնակազմի մասնագիտական զարգացման մասին;

զ) նպաստում է ուսանողների սոցիալական պայմանների բարելավմանը;

դ) հոգ է տանում սահմանափակ հնարավորություններ ունեցող ուսանողների ուսուցման համար պայմանների ստեղծման մասին;

ե) նպաստում է իր տարածքում սպորտի զարգացմանը;

զ) համագործակցում է Վրաստանի այլ բարձրագույն ուսումնական և գիտա-հետազոտական հաստատությունների հետ;

է) նպաստում է միջազգային համագործակցությանը և արտերկրի համապատասխան կրթական հաստատությունների հետ ուսանողների և դասախոսների փոխանակմանը;

ը) ուսումնական, դասավանդման և մասնագիտական զարգացման միջոցով ծառայում է ազատ, ժողովրդավարական և իրավական տարածքում գիտության զարգացմանը;

թ) նպաստում է ժամանակակից գիտելիքների և տեխնոլոգիաների տարածմանը;

ժ) ապահովում է բարձրագույն կրթության առկայությունը և բաց բնույթը, ուսուցման, դասավանդման և հետազոտությունների ակադեմիական ազատությունը, ամբողջ կյանքի ընթացքում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը, բարձրագույն ուսումնական հաստատությունում որոշումների ընդունման և դրանց իրականացմանը հետևելու գործընթացին ակադեմիական անձնակազմի և ուսանողների մասնակցությունը, բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման և այդ հաստատությունում մրցույթների անցկացման հրապարակայնությունը և թափանցիկությունը, բարձրագույն կրթության բնագավառում խտրականության արգելումը, այդ թվում՝ ակադեմիական, կրոնական կամ էթնիկական պատկանելության և/կամ համոզմունքների, սեռի, սոցիալական ծագման և այլ բնույթի;

ի) ապահովում է այլ պայմանների ստեղծումը, որոնք կնպաստեն սույն հոդվածի առաջին կետով նախատեսված նպատակներին հասնելուն:

4. Ակադեմիական ազատությունը թույլատրվում է միայն հետևյալ դեպքերում.

ա) գիտական հետազոտությունների ազատություն՝ կազմակերպական հարցերի և առաջնահերթությունների որոշման ժամանակ;

բ) դասավանդման ազատություն՝ ուսումնական գործընթացում կազմակերպչական հարցերի լուծման, դասացուցակի և ուսումնական դասընթացի ծրագրի հաստատման ժամանակ;

գ) ուսուցման ազատություն՝ ուսումնական գործընթացի և բարձրորակ դասավանդման ապահովման ժամանակ:

5. Բարձրագույն ուսումնական հաստատությունում չի կարելի ստեղծել քաղաքական և կրոնական կազմակերպությունների կառուցվածքային ստորաբաժանումներ:

Հոդված 4. Բարձրագույն կրթության լեզուն

Բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդման լեզուն հանդիսանում է վրացերենը, իսկ Աբխազիայում՝ նաև աբխազերենը (այլ լեզվով դասավանդումը, բացի անհատական ուսումնական դասընթացներից, թույլատրվում է, եթե այն նախատեսված է միջազգային համաձայնագրերով և համաձայնեցված է Կրթության և գիտության նախարարության հետ):

Հոդված 16. Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման սկզբունքները

1. Բարձրագույն ուսումնական հաստատությունը ապահովում է.

ա) հրապարակայնություն և շահագրգիռ բոլոր անձանց համար բարձրագույն ուսումնական հաստատության որոշումների, ռեկտորի և ադմինիստրացիայի ղեկավարի զեկույցների և հրամանների առկայություն;

բ) ակադեմիական անձնակազմի և ուսանողների ակադեմիական ազատություն;

գ) ակադեմիական անձնակազմի և ուսանողների մասնակցություն որոշումների ընդունման գործընթացում;

դ) անձանց նկատմամբ հավասար վերաբերմունք՝ անկախ նրանց էթնիկական պատկանելությունից, սեռից, սոցիալական

ծագումից, քաղաքական կամ քաղաքական համոզմունքներից և այլն;

ե) ընտրությունների արդարություն և թափանցիկություն բարձրագույն ուսումնական հաստատությունում, մրցույթների հրապարակայնություն:

2. Բարձրագույն ուսումնական հաստատության Կանոնադրությամբ և կառուցվածքային միավորների դրույթներում չի թույլատրվում այս սկզբունքները սահմանափակող նորմերի ընդունում:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ

«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 31. Մասնագիտական կրթական հաստատության կառավարման սկզբունքները

1. Մասնագիտական ուսումնական հաստատությունն ապահովում է.

ա) շահագրգիռ անձանց համար որոշումների հրապարակայնության, թափանցիկության և հասանելիության սկզբունքի պաշտպանություն;

բ) հավասար վերաբերմունք արհեստավարժ (պրոֆեսիոնալ) ուսանողների նկատմամբ՝ անկախ նրանց սեռից, էթնիկական կամ սոցիալական պատկանելությունից, ծագումից, կրոնական կամ քաղաքական համոզմունքներից, ֆիզիկական հնարավորություններից և այլն;

գ) արհեստավարժ (պրոֆեսիոնալ) ուսանողների և մասնագիտական կրթություն դասավանդողների մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին;

դ) որոշումների ընդունման գործընթացում պոտենցիալ գործատուների պահանջների նախատեսումը;

ե) ուսումնական գործընթացի անցկացումը հաստատության ինքնավարության սկզբունքի հիման վրա:

2. Մասնագիտական ուսումնական հաստատության Կանոնադրությամբ և կառուցվածքային միավորների դրույթներով չի թույլատրվում այս սկզբունքները սահմանափակող կանոնների ընդունումը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ

«ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 4. Դասավանդման լեզուն

1. Հանրակրթական հաստատություններում դասավանդման լեզուն հանդիսանում է վրացերենը, իսկ Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունում՝ վրացերենը կամ աբխազերենը:

2. Աբխազիայի Ինքնավար Հանրապետության հանրակրթական հաստատություններում, որտեղ դասավանդումն իրականացվում է պետական լեզուներից մեկով, պետական երկրորդ լեզվի դասավանդումը պարտադիր է:

3. Վրաստանի քաղաքացիները, որոնց համար վրացերեն լեզուն մայրենի չէ, իրավունք ունեն լիարժեք միջնակարգ կրթություն ստանալ մայրենի լեզվով՝ օրենքով սահմանված կարգով, Ազգային Ուսումնական Ծրագրի համապատասխան: Հանրակրթական այդ հաստատությունում պետական լեզվի դասավանդումը պարտադիր է, իսկ Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունում՝ պետական երկու լեզուների:

4. Միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով նախատեսված դեպքերում Վրաստանում հանրակրթական հաստատությունում հնարավոր է օտար լեզվով դասավանդում իրականացնել: Հանրակրթական այդ հաստատությունում պետական լեզվի դասավանդումը պարտադիր է, իսկ Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունում՝ պետական երկու լեզուների:

Հոդված 5. Ազգային Ուսումնական Ծրագիր

1. Մույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված նպատակներին հասնելու համար, պետությունը մշակում է

Ազգային Ուսումնական Ծրագիր, որով ընդհանուր կրթության փուլերով որոշվում են պարտադիր առարկաները, առարկաների խմբերը, ժամերն ըստ առարկաների, դրանց բաշխումն ու հարաբերակցությունը, անհրաժեշտ և առավելագույն ծանրաբեռնվածության քանակը, պարտադիր առարկաների և առարկաների խմբերի դասավանդման նվազագույն ժամաքանակը, կրթական միջավայրի կազմակերպման պայմանները և առաջարկությունները:

2. Ազգային Ուսումնական Ծրագրով սահմանվում է այն ձեռքբերումների (հմտությունների և գիտելիքների) ցուցակը, որոնց յուրաքանչյուր առարկայի կամ առարկաների խմբի դեպքում աշակերտը պետք է տիրապետի՝ դասարանի կամ փուլի ավարտին: Ազգային Ուսումնական Ծրագիրը նաև նախատեսում է փոփոխված ուսումնական ծրագրեր կրթական հատուկ պահանջներ ունեցողների համար:

3. Ազգային Ուսումնական Ծրագիրը իր մեջ ներառում է հետևյալ առարկաները և առարկաների խմբերը.

- ա) վրացերեն (Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունում՝ աբխազերեն և վրացերեն) լեզու և գրականություն;
- բ) Վրաստանի պատմություն, Վրաստանի աշխարհագրություն և այլ հասարակական գիտություններ;
- գ) մաթեմատիկա;
- դ) բնական գիտություններ;
- ե) օտար լեզուներ;
- զ) ֆիզիկական, աշխատանքային և գեղագիտական դաստիարակություն:

4. Սույն հոդվածի 3-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված առարկաները կամ առարկաների խմբերը հանրակրթական այն հաստատություններում, որտեղ դասավանդումն իրականացվում է 4-րդ հոդվածի 3-րդ կետով, դասավանդվում են վրացերեն լեզվով, իսկ Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունում՝ վրացերենով կամ աբխազերենով:

5. Ազգային Ուսումնական Ծրագիրը պարտադիր է հանրակրթական բոլոր հաստատությունների համար:

6. Ազգային և Դպրոցական Ուսումնական Ծրագրերով նախատեսված առարկաների դասավանդումը պետք է լինի ակադեմիական, օբյեկտիվ, չեզոք և բազմակարծային:

Հոդված 7. Ընդհանուր կրթության առկայություն

1. Պետությունը ապահովում է յուրաքանչյուր աշակերտի՝ պետական կամ մայրենի լեզվով ընդհանուր կրթություն ստանալու իրավունքը, նրա բնակության վայրին առավելագույնս մոտ վայրում:

2. Եթե սույն հոդվածի առաջին կետով նախատեսված իրավունքի իրականացումը անհնար է ստանդարտ վաուչերով, պետությունը նման աշակերտներին ապահովում է ընդլայնված վաուչերով և/կամ լրացուցիչ ֆինանսավորմամբ՝ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված նպատակային ծրագրի շրջանակներում:

3. Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված նպատակային ծրագրի շրջանակներում ընդլայնված վաուչերի և լրացուցիչ ֆինանսավորման գումարը պետք է ապահովի սույն հոդվածի առաջին կետով սահմանված իրավունքի իրականացումը՝ փոքրածավալ հանրային դպրոցի, հատուկ, ուղղիչ կամ լեզվական դպրոցի կամ դասարանի սահմաններում, եթե առկա է տարրական փուլի 3 աշակերտ, հիմնական փուլի 6 աշակերտ և միջին փուլի 21 աշակերտ:

4. Պետությունը ազատագրկման վայրերում ընդհանուր կրթության ստացումը ապահովում է Ազատագրկման Օրենսգրքով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Հոդված 8. Հիմնական երաշխիքներ

1. Աշակերտները, ծնողները և ուսուցիչները, ինչպես նաև նրանց միությունները իրավունք ունեն հավասար պայմաններում, առանց խտրականության, սահմանված կարգով, դպրոցական ժամին կամ դպրոցի տարածքում օգտվել սույն գլխում ամրապնդված և դպրոցների կողմից ընդունված բոլոր իրավունքներից և ազատություններից, ինչպես նաև դպրոցական բոլոր ռեսուրսներից:

2. Դպրոցը իրավունք ունի դպրոցական ժամի կամ դպրոցի տարածքում, առանց խտրականության հիմքի, սահմանափակել կողմնակի անձանց իրավունքներն ու ազատությունները:

3. Դպրոցը կարող է սահմանել դպրոցական ժամին կամ դպրոցի տարածքում աշակերտի, ծնողի և ուսուցչի, ինչպես նաև նրանց միությունների իրավունքների և ազատությունների սահմանափակման՝ ոչ խտրական և չեզոք կարգեր, սույն օրենքի պահանջները կատարելու համար, ինչպես նաև եթե առկա է խելամիտ և անմիջական սպառնալիք.

ա) առողջությանը, կյանքին և գույքի անվտանգությանը;

բ) թմրանյութերի, ակոհոլի կամ ծխախոտի օգտագործում կամ անօրինական գործողության խրախուսում;

գ) անպարկեշտության կամ բամբասանքի տարածում, էթնիկական կամ կրոնական ատելության սանձազերծում, հանցագործության և բռնության հրահրում;

դ) ուսումնական գործընթացի անցկացման, դպրոցի գործունեության կամ դպրոցի տարածքում ազատ տեղաշարժի խոչընդոտում:

4. Աշակերտի, ծնողի և ուսուցչի իրավունքների և ազատությունների ցանկացած սահմանափակում պետք է լինի խելամիտ, համամասնական և նվազագույն և պետք է իրականացվի միայն սահմանված կարգի հիման վրա՝ ամբողջությամբ համահունչ ուսուցչի մասնագիտական էթիկայի վարքականոնին, համարժեք և արդար ընթացակարգով:

5. Չի թույլատրվում աշակերտի, ծնողի և ուսուցչի իրավունքների և ազատությունների այնպիսի սահմանափակումը, որը, ըստ էության, հավասար է դրանց վերացմանը: Ցանկացած սամանափակումներ կամ կանոնակարգումներ կարող են նախատեսել չեզոք՝ նրանց իրավունքների և ազատությունների իրականացման տեղի, ժամանակի և ձևի սահմանափակումներ, որոնք չեն ազդում տեղեկության և գաղափարի բովանդակության վրա և դրանք այլընտրանքային ճանապարհով իրականացնելու արդյունավետ հնարավորություն է մնում:

6. Սույն օրենքով ճանաչված աշակերտի, ծնողի և ուսուցչի իրավունքների և ազատությունների իրականացման ընթացքում ենթադրվում է դրանց օրինականությունը: Դրանց մասին վեճերի

դեպքում, այդ իրավունքների և ազատությունների մասին, այդ իրավունքների և ազատությունների՝ անօրինական օգտագործումը ապացուցելու բեռը վերապահվում է սահմանափակումները նախաձեռնողին:

7. Չի թույլատրվում այս օրենքի նպատականերին հակասող միջոցառումների ֆինանսավորումը:

8. Այս օրենքը չի բացասում հանրաճանաչ իրավունքներն ու ազատությունները, որոնց մասին այստեղ չհիշատակվեց, բայց ինքնըստինքյան բխում է օրենսդրությունից:

Հոդված 13. Չեզոքություն և ոչ խտրականություն

1. Չի թույլատրվում հանրակրթական հաստատություններում ուսման գործընթացը քաղաքականացնելը:

2. Հանրային դպրոցներում չի թույլատրվում ուսման գործընթացը օգտագործել կրոնական հրահանգավորման, прозлитиизма կամ հարկադիր ուժացման համար: Այս դրույթը չի սահմանափակում հանրային դպրոցներում պետական տոների նշումը և պատմական տարեթվերի հիշատակումը, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների վերահաստատմանն ուղղված միջոցառումների անցկացումը:

3. Չի թույլատրվում դպրոցական ընդունելության ժամանակ խտրականության ցանկացած ձև: Այս դրույթը չի բացառում զինվորական, մասնագիտական, գեղարվեստական և զարմական պատրաստություն և կրթություն իրականացնող հանրակրթական հաստատություններում ընտրական մրցույթների անցկացման հնարավորությունը:

4. Դպրոցներին չի թույլատրվում իրենց սեփական իրավասություններն ու ռեսուրսները օգտագործել այնպես, որը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն կոչ անել ցանկացած խտրականություն աշակերտի, ծնողի և ուսուցչի, ինչպես նաև նրանց միությունների նկատմամբ:

5. Ցանկացած առանձնահատուկ վերաբերմունք կամ բացառություն կատարելը համարվում է խտրականություն, բացառությամբ դեպքերի, երբ նման գործողությունները կամ բացառությունները արդարացի են և խելամիտ, ծառայում են ազատ

զարգացման և յուրաքանչյուր անձի և խմբի՝ հավասար հնարավորությունների ապահովմանը:

6. Դպրոցը պարտավոր է պաշտպանել և խթանել աշակերտների, ծնողների և ուսուցիչների միջև հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի հաստատումը՝ անկախ նրանց սոցիալական, էթնիկական, կրոնական, լեզվական և գաղափարական պատկանելությունից:

7. Դպրոցը հավասարության հիմունքներով պաշտպանում է մայրենի լեզուն օգտագործելու, պահպանելու և մշակութային ծագման մասին արտահայտելու՝ ազգային փոքրամասնությունների անհատական և հավաքական իրավունքը՝ ազատորեն

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 105¹. Ազգանվան սահմանում

1. Ազգանուն կարելի է սահմանել այն անձին, որի ծննդյան վկայականում ազգանուն նշված չէ:

2. Այս հոդվածի առաջին կետով նախատեսված դեպքում, անձին թույլատրվում է ընտրել ուղիղ գծով ազգականի ազգանունը կամ ցանկացած ազգանուն, որից նա օգտվում է նվազագույնը 5 տարի, ինչը պետք է հաստատվի նրա անվամբ պատրաստված փաստաթղթերով և այլ ապացույցներով:

3. Եթե անհնար է անձի համար սահմանել ուղիղ գծով ազգականի ազգանունը նման ազգանման բացակայության կամ այլ պատճառներով, անձին կարելի է ազգանուն սահմանել նրա կամ նրա՝ ուղիղ գծով ազգականի անունից, վերջավորությամբ՝ նրա ցանկությամբ կամ առանց դրա:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ «ՀԵՌԱՐԶԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 16. Հայեցակարգային պարտավորություններ

Հանրային հեռարձակողը պարտավոր է.

ա) ապահովել խմբագրական անկախություն, արդարացիություն և ծրագրերի անկողմնակալություն; ազատություն կառավարական, քաղաքական, կրոնական և կոմերցիոն ազդեցությունից;

բ) ապահովել լուրերի, հասարակական-քաղաքական, կրթական-ճանաչողական, մշակութային և մարզական ծրագրերի միջև՝ հասարակական շահերին համապատասխան հավասարություն;

գ) ապահովել լսարանի ժամանակին և բազմակողմանի տեղեկացվածությունը Վրաստանի, նրա շրջանների և աշխարհի կարևոր իրադարձությունների մասին;

դ) լավագույն ժամին փոխանցել լուրեր և հասարակական-քաղաքական հաղորդումներ, և ընտրարշավի ժամանակ, ինչպես նաև նախընտրական բանավեճեր;

ե) ծրագրերում չարտահայտել սեփական կարծիքը;

զ) արտահայտել հասարակության բազմակարծությունը;

է) ոչ պակաս, քան 25% եթերաժամ տրամադրել անկախ իրավաբանական անձանց կողմից պատրաստված ծրագրերին, որոնց գնումը պետք է իրականացվի «Պետական գնումների մասին» Վրաստանի Օրենքով և սույն օրենքով սահմանված կարգով;

ը) ծրագրերում արտացոլել հասարակությունում առկա էթնիկական, մշակութային, լեզվական, կրոնական, տարիքային և սեռային բազմազանությունը;

թ) երեխաների և դեռահասների հետաքրքրություններին համապատասխան՝ համամասնությամբ տեղադրել մանկական ծրագրեր;

ժ) նախատեսել սահմանափակ կարողություններ ունեցող անձանց հետաքրքրությունները;

ժա) նպաստել երկրի ինքնության, հոգևոր արժեքների և մշակութային բազմազանության զարգացմանը;

զ) համապատասխան համամասնությամբ տեղադրել փոքրամասնությունների լեզվով, փոքրամասնությունների մասին և փոքրամասնությունների կողմից պատրաստված ծրագրեր:

Հոդված 56. Ծրագրային սահմանափակումներ

1. Արգելվում է պատերազմի քարոզչության ցանկացած ձև:
2. Արգելվում է հեռարձակել այնպիսի ծրագրեր, որոնք ստեղծում են պարզ և ուղղակի վտանգ ռասսայական, էթնիկական, կրոնական կամ այլ ատելության հրահրման ցանկացած ձևով, ցանկացած խմբի խտրականություն կամ բռնության արտոնում:
3. Արգելվում են բոլոր ծրագրերը, որոնք ուղղված են անձին կամ խմբին վիրավորելուն և խտրականությունը՝ ֆիզիկական կարողությունների, էթնիկական պատկանելության, կրոնի, աշխարհայացքի, սեռի, սեռական կողմնորոշման կամ այլ առանձնահատկությունների կամ կարգավիճակի կամ այդ հատկության կամ կարգավիճակի առանձնահատուկ ընդգծման պատճառով, բացի դեպքերից, երբ դա անհրաժեշտ է ծրագրի բովանդակության համար և ատելության ցուցադրման նպատակ ունի:
4. Արգելվում է պոռնոգրաֆիայի, ինչպես նաև ծրագրերի կամ գովազդների տեղադրումը, որոնք պարունակում են մարդու և քաղաքացու պատվի և հիմնարար իրավունքների խախտում, որոնք պարունակում են անպարկեշտություն:
5. Արգելվում է երեխաների և դեռահասների ֆիզիկական, մտավոր և բարոյական զարգացման վրա վնասակար ազդեցություն ունեցող ծրագրերի տեղադրումը, այն ժամանակ, երբ գոյություն ունի նրանց կողմից նման ծրագրեր դիտելու կամ լսելու մեծ հավանականություն:
6. Կարելային հեռարձակման արտոնագրի սեփականատերը իրավունք ունի տեղադրել սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված ծրագիր կամ գովազդ, ցանկացած ժամի, կողմնորված տեսքով, սպառողի հետ կնքված անհատական պայմանագրի հիմքով:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ «ԽՈՍՔԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 3. Խոսքի և արտահայտման ազատություն

1. Պետությունը ընդունում և պաշտպանում է խոսքի և արտահայտման ազատությունը՝ որպես անքակտելի և բարձրագույն մարդկային արժեքներ: Իշխանության իրականացման ճանապարհին ժողովուրդն ու պետությունը սահմանափակված են այս իրավունքներով և ազատություններով, որպես անմիջականորեն գործող իրավունքով:
 2. Բոլորը, բացառությամբ ադմինիստրատիվ մարմնի, ունեն արտահայտման ազատության իրավունք, որն իր մեջ ներառնում է.
 - ա) կարծիքների բացարձակ ազատություն;
 - բ) քաղաքական խոսքի և բանավեճի ազատություն;
 - գ) ցանկացած տեսակի տեղեկություն և գաղափար փնտրելու, ստանալու, ստեղծելու, պահպանելու, մշակելու, տարածելու իրավունք;
 - դ) գրաքննության անթույլատրելիություն, խմբագրական անկախություն և բազմակողմանի քննարկության, տեղեկատվության աղբյուրի գաղտնիության պահպանման և իրենց խղճին համապատասխան խմբագրական որոշումներ ընդունելու՝ լրագրողների իրավունք;
 - ե) ուսուցման, դասավանդման և հետազոտության ակադեմիական ազատություն;
 - զ) արվեստի, ստեղծագործելու, հայտնագործության ազատություն;
 - է) ցանկացած լեզվով ելույթի, ցանկացած գրի օգտագործման իրավունք;
 - ը) բարեգործության իրավունք;
 - թ) բացահայտման իրավունք և բացահայտողների պաշտպանություն;
 - ժ) պարտադրանքից ազատություն, ազատություն՝ սեփական տեսակետներն արտահայտելու հավատքի, դավանանքի, խղճի և աշխարհայացքի, էթնիկական, մշակութային և սոցիալական

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ
«ՀԱՎԱՔՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՅՑԵՐԻ ՄԱՍԻՆ»

պատկանելության, ծագման, ընտանեկան, գույքային և դասային դրության, ինչպես նաև բոլոր այն հանգամանքների մասին, որոնք կարող են իր իրավունքների և ազատությունների խախտման հիմք դառնալ:

3. Սույն օրենքը չի հերքում խոսքի և արտահայտման ազատության հետ կապված՝ Վրաստանի Սահմանադրությամբ ամրագրված և հանրաճանաչ իրավունքները, ազատությունները և երաշխիքները, որոնք չեն հիշատակվում, բայց ինքնըստինքյան բխում են մարդու իրավունքների և ազատությունների հանրաճանաչ սկզբունքներից:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 12. Հանրային ծառայության լեզուն

Հանրային ծառայությունը Վրաստանում իրականացվում է վրացերեն լեզվով, իսկ Աբխազիայում՝ նաև աբխազերեն լեզվով: Տեղական ինքնակառավարման հաստատություններում ծառայությունն իրականացվում է «Պետական լեզվի մասին» Վրաստանի օրենքով սահմանված կարգով:

Հոդված 15. Պետական պաշտոնյայի համար սահմանված հիմնական պահանջները

Պետական պաշտոնյա կարող է լինել համապատասխան գիտելիքներ և փորձ ունեցող, 21 տարեկան և պետական լեզվին տիրապետող Վրաստանի գործունակ քաղաքացին:

Հոդված 16. Տեղական ինքնակառավարման պաշտոնյայի համար սահմանված հիմնական պահանջները

Տեղական ինքնակառավարման պաշտոնյա կարող է լինել 18 տարին լրացած, ծայրահեղ դեպքում միջնակարգ կրթություն ունեցող և պետական լեզվին տիրապետող Վրաստանի գործունակ քաղաքացին:

Հոդված 4.

2. Հավաքների և ցույցերի կազմակերպված և անցկացման ընթացքում չի թույլատրվում կոչ անել սահմանադրական կարգը տապալելու կամ բռնությամբ փոխելու, երկրի անկախության դեմ ոտնձգություն կատարելու և տարածքային ամբողջականությունը խախտելու, կամ կոչ, որը պատերազմի և բռնության քարոզչություն է, հրահրում է ազգային, էթնիկական, ծխական, կրոնական և սոցիալական տարաձայնություն:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ
«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 2. Հանրաքվեի մասնակիցները

1. Հանրաքվեին մասնակցության իրավունք ունեն Հանրաքվեի անցկացման օրը 18 տարին լրացած Վրաստանի քաղաքացիները՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, լեզվից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային, էթնիկական կամ սոցիալական պատկանելությունից, ծագումից, գույքային և դասային կարգավիճակից, բնակության վայրից:

2. Հանրաքվեին մասնակցության իրավունք չունեն այն քաղաքացիները, որոնք.

ա) դատարանի կողմից ճանաչվել են անգործունակ;

բ) դատապարտված են և Հանրաքվեի անցկացման օրը գտնվում են ազատությունը սահմանափակող վայրերում:

ՎՐԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՔԸ «ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 6.

1. Արգելվում է հիվանդների նկատմամբ խտրականությունը՝ հիմնված ռասայի, մաշկի գույնի, լեզվի, սեռի, գենետիկ ժառանգության, հավատի և հավատքի, քաղաքական կամ այլ համոզմունքների, գույքային և դասային կարգավիճակի, բնակության վայրի, հիվանդության, սեռական կողմնորոշման կամ անձնական բացասական տրամադրության վրա:

2. Հիվանդի իրավունքների սահմանափակման պայմանները՝ կապված այս կամ այն հիվանդության հետ, սահմանվում են Վրաստանի Օրենսդրությամբ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 11. Կրոնական գործունեություն

1. Կրոնական գործունեություն է համարվում համապատասխան կարգով գրանցված կրոնական կազմակերպության (միավորման) գործունեությունը, որի նպատակը դավանանքի և կրոնի տարածումն է, այդ թվում՝ ներքոնշյալ ուղիով.

ա) կրոնական արարողությունների, ծեսերի, աղոթքների, պաշտամունքային այլ գործողությունների կազմակերպումն ու անցկացումը;

բ) հավատացյալներին աղոթատեղի և ծիսակարգային հարմարություններ ունենալու հնարավորություն ընձեռելը՝ ինչպես անհատապես, այնպես էլ կոլեկտիվ կերպով կրոնական պահանջմունքները բավարարելու համար;

գ) կրոնական պատվիրակությունների, ուխտավորների, տարբեր հարանվանությունների ներկայացուցիչների ընդունելության և մեկնման կազմակերպումը, ազգային և միջազգային կրոնական խորհրդակցությունների, համագումարների, սեմինարների կազմակերպումը, այդ միջոցառումների կազմակերպման ընթացքում

դրանց մասնակիցներին հյուրանոցով (այլ կացարանով), փոխադրամիջոցով, սննդով և մշակութային ծառայությամբ ապահովումը;

դ) վանքեր, վանական եկեղեցիներ, հոգևոր-կրթական հաստատություններ պահելը, հոգևոր-կրթական այդ հաստատությունների աշակերտներին և ուսանողներին դասավանդումը, բարեգործական կազմակերպություններ (հիվանդանոցներ, ապաստարանների, տարեցների և հաշմանդամների տներ) պահելը, ինչպես նաև նմանատիպ գործունեության այլ կանոնադրական ձևեր, հիմնավորված (նախատեսված) կանոնիկական կանոններով:

2. Կրոնական գործունեություն է համարվում նաև կրոնական (պաշտամունքային) գրականության հրատարակությամբ կամ կրոնական նշանակության առարկաների պատրաստմամբ զբաղվող կրոնական կազմակերպությունների (միավորումների), ձեռնարկությունների գործունեությունը; կրոնական (պաշտամունքային) գրականության կամ կրոնական նշանակության առարկաների իրացմամբ զբաղվող կրոնական կազմակերպությունների (միավորումների), ձեռնարկությունների գործունեությունը; ինչպես նաև նման գործունեությունից ստացված դրամական միջոցների օգտագործումը կրոնական գործունեության իրականացման համար:

ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 29. Շահույթ չհետապնդող (ոչ առևտրային)

Իրավաբանական անձի գրանցման պայմանները

1. Շահագրգիռ անձը շահույթ չհետապնդող (ոչ առևտրային) իրավաբանական անձի հաշվառման դիմումը ներկայացնում է գրանցման մարմին:

2. Շահույթ չհետապնդող (ոչ առևտրային) իրավաբանական անձի գրանցման ժամանակ պահանջի դեպքում դիմումին ամրացվում է հիմնարար փաստաթուղթ (հիմնադիրների/անդամների համաձայնագիր)՝ ստորագրված շահույթ չհետապնդող

(ոչ առևտրային) իրավաբանական անձի բոլոր հիմնադիրներին/անդամներին կողմից, որում նշվում է.

ա) շահույթ չհետապնդող (ոչ առևտրային) իրավաբանական անձի անվանումը;

բ) շահույթ չհետապնդող (ոչ առևտրային) իրավաբանական անձի գտնվելու վայրի (իրավաբանական հասցեի) մասին տվյալներ;

գ) շահույթ չհետապնդող (ոչ առևտրային) իրավաբանական անձի գործունեության նպատակը;

դ) շահույթ չհետապնդող (ոչ առևտրային) իրավաբանական անձի հիմնադրի/անդամի (հիմնադիրներին/անդամներին) տվյալները (ֆիզիկական անձի դեպքում՝ անուն, ազգանուն, ծննդյան տարեթիվ (օր, ամիս, տարի), բնակության վայրի հասցե և անձնական համար, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը, իրավական ձևը, գրանցման տվյալները, ներկայացուցչական իրավասություն ունեցող անձը/անձինք); յուրաքանչյուր հիմնադրի/անդամի տվյալները ներկայացնում են առանձին);

ե) շահույթ չհետապնդող (ոչ առևտրային) իրավաբանական անձի կառավարող մարմնի (մարմինների) տվյալները;

զ) շահույթ չհետապնդող (ոչ առևտրային) իրավաբանական անձի կառավարող մարմնի (կառավարող անձի) ձևավորման (ընտրման) կարգը և իրավասությունների ժամկետը;

է) շահույթ չհետապնդող (ոչ առևտրային) իրավաբանական անձի կառավարող անձի տվյալները (անուն, ազգանուն, ծննդյան տարեթիվ (օր, ամիս, տարի), բնակության վայրի հասցե, անձնական համար);

ը) շահույթ չհետապնդող (ոչ առևտրային) իրավաբանական անձի կառավարող մարմնի (կառավարող անձի) որոշման ընդունման կարգն ու գործընթացը;

թ) ներկայացուցչական իրավասություն ունեցող անձի (անձանց) տվյալները (անուն, ազգանուն, ծննդյան տարեթիվ (օր, ամիս, տարի), բնակության վայրի հասցե, անձնական համար);

ժ) եթե անդամության հիմքով շահույթ չհետապնդող (ոչ առևտրային) իրավաբանական անձ է, անդամության ընդունելության, դուրս գալու և դուրս մնալու կարգը;

ի) վերակազմավորման և լուծարման որոշում կայացնող մարմնի (անձի) անվանումը, որոշման ընդունման կարգն ու

գործընթացը, եթե այն տարբերվում է սույն մասի «թ» կետում նշված կարգից և գործընթացից:

3. Գրանցման դիմումին նաև կցվում է.

ա) ծառայության վճարման մասին հաստատող փաստաթուղթ;

բ) շահույթ չհետապնդող (ոչ առևտրային) իրավաբանական անձի գտնվելու վայրի (իրավաբանական հասցեի) մասին տեղեկանք՝ գտնվելու վայրի սեփականատիրոջ՝ համապատասխան կարգով հաստատմամբ կամ գտնվելու վայրի օգտագործման՝ սահմանված կարգով ձևակերպված համապատասխան պայմանագիր:

4. Գրանցման թղթաբանության նոտարական հաստատումը պարտադիր չէ, եթե իրավասու անձինք ստորագրում են գրանցման մարմնում: Գրանցման մարմնի կողմից ստորագրության հաստատման կարգն ու պայմանները սահմանվում են «Հանրային ռեեստրի մասին» Վրաստանի Օրենքով և համապատասխան ենթաօրենսդրական ակտերով:

ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱԶԳԱՑԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

I. Ներածություն

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը և գործնական պլանը մշակվել է ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայի (վավերացված է Վրաստանի խորհրդարանի կողմից, 2005 թվականին) և «Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի մշակման մասին» Վրաստանի նախագահի 2005 թվականի օգոստոսի 8-ի №639 կարգադրության հիման վրա: Նրա հիմնական նպատակն է աջակցությունը ժողովրդավարական, համախմբված և ընդհանուր արժեքների վրա հիմնված քաղաքացիական հասարակության ստեղծմանը, որը բազմաբղետությունը համարում է իր ամրության աղբյուր և ամեն քաղաքացու

ապահովում է սեփական նույնականության պահպանության և զարգացման հնարավորություններով:

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը և գործնական պլանը հիմնվում է Վրաստանի Մահմանադրության և Վրաստանի ստանձնած միջազգային պարտականությունների վրա: Լայն հասարակական կոնսենսուսի հասնելու նպատակով ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի մշակման գործընթացում ապահովված էր ամեն շահագրգիռ կողմի մասնակցությունը: Փաստաթղթի նախագիծը պատրաստվել է Վրաստանի նախագահին կից գործող ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհրդի կողմից, որի կազմում մտնում են Վրաստանի խորհրդարանի անդամները, ժողովրդական պաշտպանը, ազգային փոքրամասնությունների, ոչկառավարական կազմակերպությունների, նախարարությունների և այլ կառավարական հիմնարկությունների ներկայացուցիչներ: Նախագծի պատրաստության գործընթացում մշտական խորհրդատվություն էր ընթանում ժողովրդական պաշտպանին կից գոյություն ունեցող ազգային փոքրամասնությունների խորհրդի մոտ: Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհուրդը նույնպես պարբերաբար վարում էր հանդիպումներ ազգային փոքրամասնություններով ինչպես բնակեցված տարածաշրջանների բնակչության և տեղական ոչկառավարական կազմակերպությունների հետ:

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը որոշում է պետության ռազմավարությունը և խնդիրները վեց հիմնական ուղղություններով. օրենքի գերակայություն, կրթություն և պետական լեզու, մեդիա և լրատվության մատչելիություն, քաղաքական ինտեգրում և քաղաքացիական մասնակցություն, սոցիալական և տարածաշրջանային ինտեգրում, մշակույթի և ինքնագոյության պահպանում: Գործողությունների պլանը նախատեսում է կոնկրետ միջոցառումներ և ծրագրեր ազգային հայեցակարգի ռազմավարական ուղղություններին համապատասխան, որոնք պետք է իրականացվեն առաջիկա հինգ տարիների ընթացքում: Գործողությունների պլանի համապատասխան բաղկացուցիչների

իրականացման պարտականությունը դրվում է դրանում մատնանշված կոնկրետ պետական հիմնարկությունների վրա:

Գործնական պլանի իրականացումը համակարգում է վերաինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակարգը: Գործնական պլանի իրականացման համար պատասխանատու պետական հիմնարկները, վերաինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի կողմից մշակված քաղաքականության համապատասխան, մինչև յուրաքանչյուր ամսվա 5 –ը ներկայացնում են նրան իրենց իրավասության շրջանակներում պատրաստված հաշվետվությունները: Յուրաքանչյուր տարվա մինչև դեկտեմբերի 10-ը վերաինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը ներկայացնում է Վրաստանի կառավարությանը և ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհրդի հաշվետվությունը պատասխանատու պետական հիմնարկությունների կողմից գործնական պլանի իրականացման մասին:

Գործնական պլանի իրականացումը վերահսկում է ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհուրդը, որը, ըստ անհրաժեշտության, կմշակի երաշխավորություններ գործնական պլանի իրականացման կապակցությամբ և կքննարկի առաջարկություններ գործողությունների պլանում փոփոխություններ և լրացումներ մտցնելու թեմայով:

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի գործողությունը չի սահմանափակվում այն վայրերով, որտեղ ավանդաբար կամ մեծ թվաքանակությամբ բնակեցված են ազգային փոքրամասնություններ:

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի ֆինանսավորման հիմնական աղբյուրը Վրաստանի պետական բյուջեն է:

II. Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի նպատակները

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի նպատակներն են.

ա) հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի միջավայրի ստեղծում Վրաստանում բնակվող բոլոր անձանց միջև,.

բ) Վրաստանի բոլոր քաղաքացիների ապահովում քաղաքացիական, քաղաքական, տնտեսական և սոցիալական իրավունքներից օգտվելու հավասար հնարավորություններով, .

գ) անհրաժեշտ պայմանների ստեղծում Վրաստանի քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներին այն անձանց արդյունավետ մասնակցության համար, որոնք պատկանում են ազգային փոքրամասնություններին;

դ) ազգային փոքրամասնությունների համար կրթության բոլոր աստիճանների հավասար մատչելիության և ընդհանուր կրթության բնագավառում հատուկ լուսավորչական անհրաժեշտությունների ապահովում,.

ե) անհրաժեշտ պայմանների ստեղծում ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանության և զարգացման համար, նրանց ինքնագոյության հիմնական տարրերի, մասնավորապես, կրոնի, լեզվի, ավանդույթների և մշակութային ժառանգության պաշտպանության համար:

III. Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի սկզբունքները

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի սկզբունքներն են.

ա) Վրաստանի բոլոր քաղաքացիների հավասարություն, ճնշման անթույլատրելիություն և հանդուրժողականության ավանդույթի հաստատում,.

բ) հավասարակշռության պահպանում քաղաքացիական ինտեգրման և ազգային փոքրամասնությունների նույնականության պաշտպանության միջև, քաղաքացիական ինտեգրման կամավորականություն և բռնի ուժացման անթույլատրելիություն,.

գ) ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ազատ ընտրության իրավունք – վարվե՞ն, թե ոչ նրանց հետ որպես ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների,.

դ) ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը որպես անհատ, այնպես էլ ուրիշների հետ համատեղ

իրականացնելու այն իրավունքները և ազատությունները, որոնք բխում են Վրաստանի Սահմանադրության և ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայից,.

ե) ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցություն բոլոր այն որոշումների ընդունմանը, որոնք ուղիղ կամ ոչանմիջականորեն վերաբերում են նրանց նույնականության պաշտպանությանը և զարգացմանը,.

զ) ներողամտության և քաղաքացիական ինտեգրման գործնական պլանի իրականացման մոնիտորինգի գործընթացում հասարակական կազմակերպությունների ընդգրկման ապահովում:

IV. Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի հիմնական ուղղությունները

1. Օրենքի գերակայություն

Օրենքի գերակայությունը ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի ռազմավարական ուղղություններից մեկն է, որը բովանդակում է հետևյալ խնդիրների իրականացում.

ա) Վրաստանի օրենսդրության հետագա ներդաշնակում Վրաստանի միջազգային պարտականությունների հետ,.

բ) ազգային փոքրամասնությունների կողմից արդարադատության համակարգի մատչելիության բարելավում,.

գ) խտրական վերաբերմունքից ազգային փոքրամասնությունների արդյունավետ պաշտպանության ապահովում,.

դ) հանրային ծառայողների գիտակցության բարձրացում ազգային փոքրամասնությունների իրավունքների և հակախտրական օրենսդրության նկատմամբ:

2. Կրթություն և պետական լեզու

Քաղաքացիական ինտեգրման ամենալուրջ մարտահրավերներից մեկը ազգային փոքրամասնությունների կողմից պետական լեզվի չիմացությունն է, ինչը նշանակալիորեն խոչընդոտում է նրանց լիարժեք մասնակցությանը երկրի քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքին: Սկզբնական փուլում անհրաժեշտ է ազգային փոքրամասնությունների մոտիվացման բարձրացման աջակցություն՝ տիրապետելու վրաց

լեզուն և հատուկ լուսավորչական կարիքներ ունեցող աշակերտների ինտեգրմանը աջակցող ծրագրերի իրականացում: Այս ուղղությամբ նախանշված են հետևյալ խնդիրները.

ա) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար նախադպրոցական կրթության մատչելիության ապահովում,.

բ) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար միջնակարգ կրթություն ստանալու աջակցություն,.

գ) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիության բարելավում,.

դ) պետական լեզվի ուսուցման աջակցություն,.

ե) կրթության բնագավառում հանրային բանավեճի և քաղաքացիական ինտեգրման աջակցություն:

3. Լրատվամիջոցներ և լրատվության մատչելիություն

Ազգային փոքրամասնությունների իրազեկվածության տեսանկյունից կարևոր քայլ կատարվեց հանրային հեռարձակման կողմից, որի էությունը 2005 թվականից ընթանում են լրատվական ծրագրեր ազգային փոքրամասնությունների լեզուներով: Վերջին ժամանակաշրջանում իրականացված օրենսդրական փոփոխությունների համաձայն, հանրային հեռարձակման ծրագրային բյուջեի առնվազն 25% պետք է ծախսվի փոքրամասնությունների լեզուներով պատրաստված ծրագրերի հաղորդմանը: Պետական լեզվի իմացության ցածր մակարդակի և վրացական հաղորդակցական մեդիայի հիմնականում վրացալեզու հեռարձակման հաշվառումով, կարևոր է հատուկ միջոցառումների անցկացում ազգային փոքրամասնությունների պատշաճ լրատվության ապահովման համար: Այս ուղղությամբ նախանշված են հետևյալ խնդիրները.

ա) ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում ազգային հեռարձակման մատչելիության ապահովում,.

բ) ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակման ծրագրերի մատչելիության ապահովում,.

գ) հաղորդումների ծրագրերում ազգային փոքրամասնությունների լուսաբանման և մասնակցության ապահովում,.

դ) ազգային փոքրամասնությունների լեզուներով էլեկտրոնային և տպագիր մեդիայի աջակցություն,.

ե) մեդիայում հանդուրժողականության և մշակութային պլուրալիզմի արմատավորման աջակցություն:

4. Քաղաքական ինտեգրում և քաղաքացիական մասնակցություն

Ազգային փոքրամասնությունների քաղաքական ինտեգրման և քաղաքացիական մասնակցության մակարդակի բարձրացման նպատակով վերջին տարիներին անց են կացվում հանրային գործիչների որակավորման բարձրացման թրեյնինգներ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, . Ավանդաբար կամ մեծ թվաքանակությամբ ազգային փոքրամասնություններով բնակեցված մունիցիպալիտետներում ընթանում է նրանց խթանում հանրային ծառայություն ընտրելիս, իսկ ընտանական նյութերը և քվեաթերթերը հրապարակվում են նրանց մայրենի լեզուներով: Ազգային փոքրամասնությունների հասարակական-քաղաքական կյանքում ակտիվ ընդգրկումը առավելապես կախված կլինի պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացման և սկզբնական փուլում պետության կողմից նրանց խթանումից հանրային ծառայությունում աշխատել սկսելու համար: Նշված ուղղություններով նախանշված են հետևյալ խնդիրները.

ա) ազգային փոքրամասնությունների հավասար ընտրական իրավունքի ապահովում,.

բ) որոշումներ ընդունելու գործընթացում ազգային փոքրամասնությունների մասնակցության բարելավում,.

գ) ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայի ժողովրդականացում:

5. Մոնիթինգ և տարածաշրջանային ինտեգրում

Վերջին տարիներին նշանակալից քայլեր կատարվեցին երկրի սոցիալ-տնտեսական

կյանքում ազգային փոքրամասնությունների լիարժեք մասնակցության ապահովման համար: Ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում իրականացվեցին ենթակառուցվի վերակենդանացման և այլ մասշտաբային

տնտեսական նախագծեր: Այս ուղղություններով նախանշված են հետևյալ խնդիրները.

ա) ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում ենթակառուցվածքի հետագա զարգացում,.

բ) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստում և նրանց աշխատանքային զբաղվածության օժանդակում,.

գ) ազգային փոքրամասնությունների սոցիալական և տարածաշրջանային շարժունության աջակցություն:

6. Մշակույթ և ինքնագոյության պահպանում

Երկրի մշակութային կյանքում ազգային փոքրամասնությունների մասնակցության և նրանց մշակութային ժառանգության աջակցության նպատակով պետությունը պլանավորում է կոնկրետ միջոցառումների իրականացում տարբեր ուղղություններով, ինչը բովանդակում է հետևյալ խնդիրների իրականացում.

ա) քաղաքացիական գիտակցության ձևավորման աջակցություն,.

բ) ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնագոյության պահպանության աջակցություն,.

գ) ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության պաշտպանություն;

դ) հանդուրժողականության ոգևորության աջակցություն, միջմշակութային երկխոսության և կապերի օժանդակում;

ե) Վրաստանի մշակութային կյանքում ազգային փոքրամասնությունների մասնակցության աջակցություն,.

զ) ազգային փոքրամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի մասին հասարակության գիտելիքների խորացում և որպես երկրի արժեքներ դրանց դրսևորում